ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

8 (77)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (77), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ազլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (77), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մարտիրոսյան
Սոցիալական ցանցերը Հայաստանում 5

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Կարեն Վերանյան
Իսրայելի նավթագազային սեկտորը 9

Արմեն Մանվելյան
Էներգետիկ գործոնի ազդեցությունը նավթով հարուստ պետությունների
և տարածաշրջանների անվտանգային դինամիկայի վրա 20

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
ԼՂՀ արտաքին քաղաքականությունը. 2016թ. սեպտեմբեր 26

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. սեպտեմբեր 33

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. սեպտեմբեր 39

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը. 2016թ. սեպտեմբեր 46

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. 2016թ. սեպտեմբեր 53

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի ռազմական
համագործակցության զարգացումները 2016թ. սեպտեմբերին 60

Հուշագիր հեղինակին 67

Տեղեկատվական անվտանգություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2016թ. աշնան տվյալները

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանի համացանցում սոցիալական ցանցերը մնում են հիմնական հարթակները: Բացի դրանից, սոցիալական ցանցերին է ուղղված ինտերնետից օգտվողների հիմնական հետաքրքրությունը: Այցելությունների աճ նկատվում է գրեթե բոլոր հարթակներում: Սակայն նկատվում է հարթակների լսարանների վերաբաշխում: 2016թ. ընթացքում ռուսաստանյան «Օդնոկլասնիկի» սոցցանցը զիջում է դիրքերը, մյուս կողմից՝ սկսում է դանդաղել «Ֆեյսբուքի» աճը, առաջ են գալիս նոր հարթակներ:

Ըստ *Google Trends* համակարգի, Հայաստանից վերջին մեկ տարվա ընթացքում *Google* համակարգի միջոցով որոնվող բառերի ամենատարածված հնգյակի մեջ գտնվում են միայն սոցիալական ցանցերի անվանումները (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

Google Trends տվյալները.
վերջին տասներկու ամիսների ընթացում
Հայաստանից ամենաշատ որոնվող բառերը



[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

Սակայն նկատվում է սոցցանցերի լսարանների վերաբաշխում: Մինչև վերջերս Հայաստանն այն եզակի երկրներից էր, որտեղ «Ֆեյսբուքը» չէր ամենից շատ այցելվող սոցիալական ցանցը: Ռուսաստանյան «Օդնոկլասնիկին» միշտ եղել է Հայաստանում առաջատար սոցիալական ցանցը: Սակայն վերջին ամիսների վիճակագրությունը ցույց է տալիս, որ շաբաթ առ շաբաթ Հայաստանից այցելություններն «Օդնոկլասնիկի» նվազում են: Վերջին կես տարում անկումը մոտ 25% է կազմել (տե՛ս *Նկար 2*).

Նկար 2

«Օդնոկլասնիկի» սոցցանցի այցելությունները Հայաստանում 2016թ. մարտ-սեպտեմբերին, շաբաթական կտրվածքով: Տվյալները՝ ըստ Liveinternet.ru-ի



Մյուս կողմից՝ «Ֆեյսբուքի» Հայաստանից ակտիվ օգտատերերի թիվը ամսական կտրվածքով հասել է արդեն մեկ միլիոնի: Օրական լսարանը հասնում է մոտ 650 հազարի: Չնայած լսարանի աճը շարունակվում է, սակայն այն դանդաղել է. վերջին երեք ամսում աճը կազմել է ընդամենը մոտ 5%:

Մեկ այլ սոցիալական ցանց, որը պատկանում է «Ֆեյսբուք» կորպորացիային, «Ինստագրամը», հակառակը, աճում է արագ տեմպերով: Այստեղ օրական օգտվողների թիվը Հայաստանից հասնում է 110 հազարի, իսկ ամսական կտրվածքով լսարանը հասնում է 200 հազարի, ամսական աճը՝ 15%-ի: Ըստ *Similarweb* կազմակերպության գնահատականի, «Ինստագրամն» արդեն այցելություններով տասնմեկերորդ տեղում է հայտնվել Հայաստանում[1] (տե՛ս *Նկար 3*).

[1] https://www.similarweb.com/top-websites/armenia

Նկար 3

Հայաստանում ամենից շատ այցելվող կայքերի ցանկը։
2016թ. սեպտեմբերի տվյալները՝ ըստ Similarweb կազմակերպության

1	ok.ru
2	facebook.com
3	youtube.com
4	mail.ru
5	google.am
6	vk.com
7	google.com
8	google.ru
9	yandex.ru
10	list.am
11	instagram.com

«Թվիթերի» դեպքում լսարանի գնահատումը բավական բարդանում է, քանի որ հիմնականում կատարվում են ավտոմատացված հեռարձակումներ կայքերից կամ այլ սոցցանցերից, և տվյալ օգտատերերի ակտիվությունը շատ դեպքերում թվացյալ է, որովհետև իրենք չեն այցելում սոցցանց։ «Թվիթերի» հայաստանյան լսարանը մոտավորապես կարելի է գնահատել մոտ 15-20 հազար օգտատեր, որոնց մեջ են նաև նշված ավտոմատացված հաշիվները։ Հարկ է նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում նկատվում է սոցցանցի ակտիվացում հատկապես երիտասարդության շրջանում։

«Թվիթերի» և «Ինստագրամի» դեպքում նկատվում է սեռային անհավասարակշռություն. այստեղ օգտվողների մոտ երկու երրորդը կանայք են։ «Ֆեյսբուքում» սեռային բաշխումը հավասար է։

Ռուսաստանյան «ՎԿոնտակտե» սոցցանցում, ըստ հարթակի գովազդային համակարգի տվյալների, գրանցված է 1 146 000 հայաստանցի, Հայաստանից այցելություններով նույնպես այս սոցցանցը տասնյակի մեջ է[2]։ Մյուս կողմից՝ այցելուների հիմնական մասը «ՎԿոնտակտե»-ն օգտագործում է ոչ որ-

[2] https://www.similarweb.com/top-websites/armenia

պես սոցիալական ցանց, այլ միայն որպես երաժշտություն լսելու և ֆիլմեր նայելու հարթակ, Հայաստանից օգտատերերի ակտիվությունը քննարկումներում շատ ցածր է:

Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ Հայաստանից սոցցանցերի այցելուների թիվը շարունակում է աճել, չնայած այն արդեն չունի պայթյունային բնույթ ինչպիսին էր 2011-2015թթ. ընթացքում[3]: Նկատվում է հագեցվածություն, մյուս կողմից՝ լսարանների վերաբաշխում սոցցանցերի միջև:

[3] Սամվել Մարտիրոսյան, Սոցիալական ցանցերը Հայաստանում (2015թ. տվյալները): http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13686&sphrase_id=55883

Էներգետիկա

ԻՍՐԱՅԵԼԻ ՆԱՎԹԱԳԱԶԱՅԻՆ ՍԵԿՏՈՐԸ

Իսրայել-Ադրբեջան նավթագազային համագործակցությունը

Կարեն Վերանյան*

Վերջին տարիներին Իսրայելն ակտիվորեն ներգրավվել է հարավկովկասյան ռազմաքաղաքական, տնտեսական-էներգետիկ զարգացումներում: Մեր տարածաշրջանում իսրայելական գործոնի ակտիվացմանը զգալիորեն խթանում են Ադրբեջանի հետ Իսրայելի համագործակցության խորացման ներկայիս տեմպերը: Դժվար չէ նկատել, որ ի տարբերություն Հայաստանի կամ Վրաստանի, հարավկովկասյան ուղղությամբ Իսրայելի հետ համագործակցության անհամեմատ բարձր մակարդակ է պահպանում պաշտոնական Բաքուն: Եթե հետխորհրդային կարգերի փլուզումից հետո և ընդհուպ մինչև նախորդ դարի 90-ականները Իսրայել-Հարավային Կովկաս շփումները ներկայանում էին Թուրքիայի միջնորդությամբ, ապա 2000-ականներից Իսրայելն աստիճանաբար անուղղակիորեն ներգրավվել է հարավկովկասյան ռազմաքաղաքական, տնտեսական գործընթացներում:

Իսրայելի և Ադրբեջանի միջև երկկողմ համագործակցությունը թևակոխել է որակապես նոր փուլ: Կողմերի միջև համագործակցության խորացման միտումն աչքի է ընկնում ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական հարթությունում: Բազմիցս նշվել է իսրայելական արտադրության սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մատակարարումների, Ադրբեջանում համատեղ ռազմարդյունաբերական կենտրոնների գործարկման, համատեղ արտադրության ռազմական տեխնիկայի թողարկման մասին:

Իսրայելական կողմն Ադրբեջանը դիտում է ոչ միայն որպես իսրայելական արտադրության ռազմական տեխնիկայի և սպառազինությունների սպառման կարևոր արտաքին շուկա, այլև շահագրգռված է երկկողմ տնտե-

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

սական և, առաջին հերթին, էներգետիկ համագործակցության խորացման, մասնավորաբար՝ ադրբեջանական նավթագազային ռեսուրսների մատակարարումների հարցում:

Նավթային մատակարարումների շուրջ

2006թ. հունիսին Կասպյան երկրների էներգետիկ ֆորումի աշխատանքներին մասնակցելու նպատակով Բաքու էր ժամանել նաև Իսրայելի ազգային ենթակառուցվածքի նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը: Վերջինս հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, երկրի էներգետիկայի նախարարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև Իսրայելին ադրբեջանական նավթագազային ռեսուրսների մատակարարումներին վերաբերող հարցեր: Բանակցությունների արդյունքում կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել թուրքական Ջեյհանից ադրբեջանական նավթի Իսրայել մատակարարման վերաբերյալ: Ձեռք բերված պայմանավորվածությունները կարճ ժամանակ անց արդյունք տվեցին. 2006թ. կեսերին սկիզբ առած լիբանանա-իսրայելական պատերազմական գործողությունների շեմին իսրայելական կողմը ստացավ ադրբեջանական նավթի առաջին խմբաքանակը, որը Ջեյհանից լցանավերով հասցվել էր իսրայելական Հայֆա քաղաք: Սակայն լիբանանյան ռազմական ճգնաժամին զուգահեռ՝ պաղեստինյան կողմը սկսեց ռմբակոծել իսրայելի հարավ-արևմուտքում տեղակայված Աշքելոն քաղաքը, որը Կարմիր և Միջերկրական ծովերի միջև ընկած Էյլատ-Աշքելոն նավթամուղի սկզբնակետն է (այդ նավթատարով իրականացվում էին կասպյան նավթի փոխադրումները): Որոշ տեղեկատվական աղբյուրների համաձայն, ռազմական գործողությունների տեղափոխումը դեպի Աշքելոն վկայում էր Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի և այլ շահագրգիռ երկրների ղեկավար շրջանակներում հասունացած դժգոհությունների մասին՝ պայմանավորված իսրայելական կողմի ակտիվացման հետևանքով նոր հնարավոր նավթային երթուղիների գործարկման հետ, ինչը կարող էր վերափոխել ինչպես մերձավորարևելյան տարածաշրջանում նավթափոխադրումների աշխարհագրությունը, այնպես էլ համաշխարհային նավթամատակարարումների ողջ տրամաբանությունն ու բնույթը: Այդ ժամանակ խոսվում էր այն մասին, որ հենց իսրայելական նավթատարով էր նախատեսվում Ջեյհանից իրա-

կանացնել ոչ միայն ադրբեջանական, այլև ղազախական նավթի մատակարարումները (շրջանցելով Սուեզյան ջրանցքը) և նավթը հասցնել Արևելյան Ասիա՝ Հնդկաստան, Ճապոնիա, հնարավորության դեպքում՝ նաև Ավստրալիա ու Նոր Զելանդիա։

2008թ. դեպի Իսրայել ադրբեջանական նավթի և նավթամթերքների արտահանման ծավալները բավական զգալի են եղել. ըստ որոշ ոչ պաշտոնական գնահատականների, նավթի և նավթամթերքների արտահանման ծավալները կազմում էին շուրջ $3,5 մլրդ, ինչը բավարարում էր Իսրայելի նավթային տարեկան պահանջարկի գրեթե քառորդ մասը։ Կրկին ոչ պաշտոնական տվյալների համաձայն, վերջին 2 տարիներին ադրբեջանական նավթն արդեն նախկին 25-30% շեմի փոխարեն ծածկում է Իսրայելի ներքին նավթային տարեկան պահանջարկի 35-40%-ը։

2007թ. իսրայելական կողմը բարձրացրել էր Ջեյհան-Աշքելոն նավթատարի կառուցման հարցը, որով էլ կմատակարարվեր ադրբեջանական նավթը։ Այսինքն՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, ըստ իսրայելական կողմի առաջարկած նախագծի, նախատեսվում էր միացնել արդեն գործող իսրայելական Էյլատ-Աշքելոն նավթատարին։ Սակայն այդ նախագծի իրագործման շուրջ զարգացումներն առայսօր, շահագրգիռ երկրների քաղաքական և էներգետիկ շահերի անհամատեղելիության պատճառներից ելնելով, շարունակում են մնալ խոսակցությունների մակարդակում։

Թուրք-իսրայելական հարաբերությունների սառեցման արդյունքում, երբ 2010թ. հումանիտար օգնություն ցուցաբերելու նպատակով Գազա ուղևորվող թուրքական նավի՝ Իսրայելի կողմից բռնագրավման հետևանքով Թուրքիայի 9 քաղաքացի զոհվեց, կտրուկ լարվեցին թուրք-իսրայելական հարաբերությունները՝ հասնելով դիվանագիտական հարաբերությունների զրոյական մակարդակի։ Թուրքական կողմն առիթը բաց չէր թողնում բացասաբար ազդելու Իսրայելի հեղինակության վրա մերձավորարևելյան աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական զարգացումներում։ Թուրքական կողմը ջանք չէր խնայում մեկուսացնելու Իսրայելին տարածաշրջանային էներգետիկ գործընթացներից և նախաձեռնություններից։

Բացառություն չէր նաև Ադրբեջանի հետ Իսրայելի էներգետիկ համագործակցության ոլորտը։ Պաշտոնական Անկարան բազմիցս դիմել է Ադրբեջանի իշխանություններին՝ վերանայել վերջինիս հարաբերություններն Իս-

բայելի հետ: Թուրքական կողմը հանդես եկավ հստակ քայլերով, որոնք կարող էին բացասաբար ազդել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով Իսրայելին նավթ մատակարարելու վրա, ընդհուպ մինչև նավթի արտահանման դադարեցումը՝ շեշտադրումներն անելով ադրբեջանական նավթի արտահանումների հարցի վրա:

Սակայն Բաքվի իշխանությունները փորձեցին մաննրել ստեղծված ճգնաժամային իրավիճակում և պահպանել Իսրայելի հետ փոխշահավետ համագործակցության նախկին տեպմերը: Ինչպես նշեցինք, Ադրբեջանն իսրայելական արտադրության ռազմական տեխնիկայի և սպառազինությունների մատակարարման կարևոր շուկաներից է: Բացի այդ, ադրբեջանական կողմը շահագրգռված է երկրի տնտեսության տարբեր ոլորտներում իսրայելական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ: Իսրայելական կողմն, իր հերթին, թուրք-իսրայելական հարաբերությունների սառեցման ֆոնին չգնաց ադրբեջանական կողմի հետ համագործակցության թուլացման ճանապարհով՝ չնայած թուրքական ճնշումներին: Նշենք, որ Իսրայելն ադրբեջանական նավթի հիմնական ներկրողներից մեկն է՝ տարբեր հաշվարկներով գնելով շուրջ 4-6 մլն տոննա նավթ: 2010թ. վիճակագրությամբ՝ Իսրայելը ներմուծել է տարեկան 12 մլն տոննա նավթ, որից 2-2,5 մլն-ն՝ Ադրբեջանից:

Վերջին շրջանում թուրք-իսրայելական հարաբերությունների բարելավմանը զուգահեռ՝ Իսրայելի վերնախավում կրկին ակտիվացան խոսակցությունները Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարն Էյլատ-Աշքելոն իսրայելական նավթամուղին միացնելու մասին: Իսրայելի ղեկավարությունը մեկ անգամ չէ, որ հանդես է եկել Էյլատ-Աշքելոն նավթամուղով (Կարմիր ծովով նավթը վերգետնյա ցամաքային ճանապարհով մատակարարվում է Միջերկրական ծով և հակառակ ուղղությամբ) ադրբեջանական նավթի փոխադրման նախագծի տնտեսական շահավետության և կարևորության մասին, որով նավթը կարող էր մատակարարվել Հեռավոր Արևելքին:

Այդ նախագծի շահավետությունը նաև այն է, որ Ջեյհանն ընդամենը 600 կմ է հեռու իսրայելական Հայֆա քաղաքից, որի նավթավերամշակման գործարաններն օգտագործում են Ջեյհանով մատակարարվող ադրբեջանական նավթը: Այն դեպքում, երբ մինչ այդ ադրբեջանական նավթը մատակարարվում էր Սուփսային, որն, ինչպես հայտնի է, 2000 կմ է հեռու Հայֆայից:

Էյլատ-Աշքելոն նավթային ընկերությունն, իր հերթին, շահագրգռված է Ջեյհանից նավթի մատակարարման երթուղու կառուցմամբ և նախագծի իրագործման համար ֆինանսական ներդրումների իրականացման պատրաստակամությամբ, որը հետագայում, օգտագործելով Իսրայելի ներքին էներգետիկ ենթակառուցվածքները, կուղղվի դեպի Արևելյան Ասիայի երկրներ:

Էյլատ-Աշքելոն ընկերության հիմնական գործառույթներից է Էյլատից դեպի Հայֆա նավթի մատակարարումների ապահովումը, որի իրականացման համար գործում է 3 նավթամուղ. հիմնական նավթամուղը 254 կմ երկարությամբ միավորում է Էյլատի ու Աշքելոնի նավահանգիստները, 36 կմ երկարությամբ նավթատարը միավորում է Աշքելոնի նավթային բազան Աշդոդի նավթավերամշակման գործարանի հետ, 3-րդը 197 կմ երկարություն ունեցող նավթամուղը կապում է Աշքելոնը Հայֆայի նավթավերամշակման գործարանի հետ:

Էյլատ-Աշքելոն նավթամուղային ընկերությունը (*Eilat-Ashkelon Pipeline Company, EAPC*) հիմնադրվել է 1968թ.՝ որպես արդյունք Իսրայելի և Իրանի ազգային նավթային ընկերության միջև հաստատված համագործակցության՝ Էյլատ-Աշքելոն նավթատարի կառուցման և շահագործման նպատակներով: Այդ համագործակցությունը դադարեց 1979թ. իրանական հեղափոխությունից հետո, սակայն գործարքն իրավական տեսանկյունից առ ոչինչ էր: Իրանական ազգային նավթային ընկերությունը 3 դատական հայց է ներկայացրել Իսրայել պետության և իսրայելական ընկերությունների դեմ՝ պահանջելով միլիարդավոր դոլարների փոխհատուցում: Նշենք, որ միայն 2015թ. Իսրայելի կառավարությունն ազգայնացրեց Էյլատ-Աշքելոն նավթատարային ընկերությունը:

Չնայած ադրբեջանական նավթի՝ Իսրայելի տարածքով Հեռավոր Արևելք փոխադրման նախագծի տնտեսական շահավետությանն ու կարևորությանը, իսրայելական կողմի հավաստիացումներին, ադրբեջանական *SOCAR*-ը որոշակի վերապահումներով է մոտենում այդ առաջարկություններին՝ առաջին հերթին խուսափելով նախագծի իրագործման հնարավորության դեպքում իր կողմից հավելյալ ֆինանսական ներդրումներից: Ադրբեջանական կողմը փորձում է բավարարվել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով ադրբեջանական նավթի՝ դեպի Ջեյհանի վերջին տերմինալ մատակարարմամբ, իսկ նավթի հետագա մատակարարումների և փոխադրումների հարցը, ըստ Բաքվի ընկերության ղեկավարության դիրքորոշման, ընկերության պատասխանատվության շրջանակներից դուրս է:

2007թ. մայիսին ադրբեջանական կողմը համաձայնագիր ստորագրեց *Palmali Shipping* մասնավոր կազմակերպության հետ, ըստ որի՝ առաջիկա 10 տարիներին և մինչև 2017թ. մայիս ադրբեջանական նավթը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարով մատակարարվելու էր Ջեյհան, որտեղից արդեն ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն հենց այդ մասնավոր ընկերության նավերով պետք է փոխադրվեր արտաքին շուկաներ:

Վերջին տարիներին խոսակցություններ եղան ադրբեջանական նավթի մատակարարումների կազմակերպման հարցում *SOCAR*-ի և թուրքական կողմի միջև: Ադրբեջանական նավթի Իսրայել մատակարարումների հարցը մեկ անգամ չէ, որ հայտնվել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում՝ առանձնանալով սկանդալային դրվագներով: Թուրք ընդդիմադիրները բազմիցս հայտարարել են, որ Իսրայելին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարով ադրբեջանական նավթի մատակարարումներով զբաղվում է անձամբ Էրդողանի որդին, ինչին բացասաբար էր վերաբերվում պաշտոնական Բաքուն, քանի որ հենց ադրբեջանական *SOCAR*-ն է հանդիսանում Իսրայելին նավթի հիմնական մատակարարը, իսկ վերջինիս դուստր ընկերություն *Caspian Drilling Company*-ն Իսրայելի համար Միջերկրական ծովում իրականացնում է նավթի հայտնաբերման աշխատանքներ:

Մյուս կողմից, հատկապես վերջին 2-3 տարիներին ակտիվացել են խոսակցություններն այն մասին, որ Իսրայելն առավել ուշադիր է դարձել էներգետիկ ռեսուրսների և, մասնավորապես, նավթի մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման հարցերում: Խոսքը վերաբերում է նրան, որ Իսրայելը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերել իրաքյան քրդերից նավթի մատակարարման հարցին: Նշվում էր, որ 2014թ. մայիս-օգոստոսին Իսրայելն իրաքյան քրդերից գնել է 19 մլն բարել նավթ, համաշխարհային գներով՝ շուրջ $1 մլրդ: ԶԼՄ-ում լուրեր տարածվեցին, որ Իսրայելն ադրբեջանական նավթին փոխարինող է գտել: Նշենք նաև, որ Իսրայելը նավթ գնում էր նաև Ղազախստանից ու Ռուսաստանից:

Իսրայելական կողմի համար այդ գործարքը փոխշահավետ է այն առումով, որ Իսրայելը քրդական նավթը գնում էր բավական ցածր գներով, իսկ իրաքյան քրդերն այդպիսով կարողանում էին կարգավորել իրենց ֆինանսական խնդիրները և արդյունավետ պայքարել «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ: Ի դեպ, քրդական նավթը գնում է ոչ միայն Իս-

բայելը. գաղտնի համաձայնությունների և գործարքների արդյունքում քրդական նավթը, որը գործող նավթամուղով հասնում է Ջեյհան նավահանգիստ, մատակարարվում է Իտալիային, Ֆրանսիային և այլն:

Պաշտոնական Բաղդադը մեկ անգամ չէ, որ հայտնել է իր մտահոգությունը, թե իրաքյան քրդերը նավթի վաճառքով կարող են ձեռք բերել ֆինանսական, հետևաբար նաև քաղաքական անկախություն և առավել արդյունավետ իրականացնել սեփական պետության կազմավորման գործընթացը: Այս համատեքստում անհրաժեշտ է հիշատակել, որ Իսրայելի և քրդերի միջև (Իրաք, Թուրքիա) համագործակցության միտումները նոր երևույթ չեն, դրանք սկիզբ են առել նախորդ դարի 60-ականներին:

Նկար 1

Կարմիր և Միջերկրական ծովերը միավորող իսրայելական նավթատար ցանցը



Համագործակցությունը բնական գազի մատակարարման շուրջ

Ի տարբերություն Իսրայելին ադրբեջանական նավթի և նավթամթերքի մատակարարումների, Ադրբեջանից գազի մատակարարման ծավալներն աչքի չեն ընկել խոշոր ծավալներով:

Դեռևս 2008թ. հունիսին Բաքվում կայացած ասուլիսում Իսրայելի ազգային ենթակառուցվածքի նախարար Բենիամին Բեն-Էլիեզերը հանդես

եկավ հայտարարությամբ, որ Իսրայելի կառավարությունը մտադիր էր Ադրբեջանի հետ ստորագրել բնական գազի մատակարարման մասին երկարաժամկետ՝ 20-30 տարվա համաձայնագիր: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպման ժամանակ կողմերը քննարկել էին նաև այդ համաձայնագրի շրջանակներում նախատեսվող բնական գազի մատակարարումների ծավալների հարցը: Նախարարի խոսքով, առաջիկա մեկ տասնամյակում Իսրայելի բնական գազի պահանջարկը կկազմի տարեկան 12 մլրդ մ^3, որը մասնակի կծածկվի ի հաշիվ ադրբեջանականի: Նախատեսվում էր, որ ադրբեջանական գազը մատակարարվելու էր Թուրքիայից ստորջրյա խողովակաշարով, որը ենթադրվում էր կառուցել մինչև 2012թ.: Ադրբեջանից բնական գազը հասնում է Թուրքիա Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով, որը պետք է Թուրքիայի ներքին խողովակաշարով մատակարարվեր մինչև Միջերկրական ծով:

Իսրայելական կողմը շահագրգռված է նաև Թուրքիայի տարածքով իսրայելական գազի Եվրոպա մատակարարմամբ: 2010թ. սկսած՝ թուրք-իսրայելական հարաբերությունների սառեցման արդյունքում, այս ուղղությամբ Իսրայելի ղեկավարության մտադրությունները որոշակիորեն հետին պլան մղվեցին: Սակայն վերջին շրջանում կողմերի միջև հարաբերությունների բարելավման գործընթացն Իսրայելի համար կրկին ակտուալ դարձրեց գազի մատակարարումների դիվերսիֆիկացման հարցերը:

Այդ խոսակցություններն ակտիվացան Ռուսաստանի և Թուրքիայի միջև քաղաքական հարաբերությունների սառեցման համատեքստում՝ պայմանավորված թուրքական կողմից ռուսական ՍՈՒ-24 ռազմական ինքնաթիռի խոցման միջադեպով, ինչի արդյունքում Թուրքիան կրճատեց ռուսական գազի գնման ծավալները: Ինչպես նշում են էներգետիկ ոլորտի փորձագետներից շատերը, դեպի Իսրայել բնական գազի՝ Թուրքիայի տարածքով մատակարարման համար գազատար կարելի է կառուցել կամ Միջերկրական ծովի հատակով, կամ ցամաքային ճանապարհով, սակայն 2 դեպքում էլ առնչություններ են լինում Հյուսիսային Կիպրոսի, Լիբանանի կամ Սիրիայի հետ՝ պարունակելով ֆինանսական ներդրումների համար մեծ ռիսկեր:

Իսրայելին գազով և նավթով մատակարարումների հարցը մշտապես փոխկապակցված է եղել տարածաշրջանային քաղաքական զարգացումների

հետ: Իսրայելին գազի մատակարարումների շուրջ ծավալվող քաղաքական, էներգետիկ զարգացումներից անմասն չէ առաջին հերթին պաշտոնական Թեհրանը: Վերջինը քանիցս հայտնել է իր անհանգստությունը հարցի առնչությամբ: Վերջերս Իրանի ղեկավարությունը մեսիջներ էր ուղարկել ադրբեջանական կողմին, թե Իրանը շահագրգռված է իրանական գազը Եվրոպային վաճառելու հարցում և ակնկալում է ադրբեջանական կողմի համագործակցությունը:

Փորձագետների մի մասն էլ կարծում է, թե Իսրայելի համար առավել նպատակահարմար կլինի կառուցել հեղուկ բնական գազի տերմինալ (ՀԲԳ) և սկսել հեղուկ բնական գազի արտահանումը, քանի որ նման գործարանի հնարավոր կառուցման ծախսերը կարող են լինել համարժեք կամ միգուցե ավելի քիչ գազամուղի կառուցման համար նախատեսվող ֆինանսական ներդրումներից: Եթե նույնիսկ իսրայելական կողմը որոշում կայացնի կառուցել գազատարը, դրա իրականացումը հնարավոր կդառնա միայն 2020թ. հետո, քանի որ հարկավոր է ոչ միայն գազատար կառուցել Թուրքիայի տարածքով, ինչը ենթադրում է զգալի ֆինանսական ներդրումներ ու քաղաքական հարցերի կարգավորում, այլև շարունակել այն դեպի Եվրոպա՝ ունենալով վերջինիս իրավաքաղաքական թույլտվությունը, որը նույնպես լուրջ խնդիր է:

Իսրայելին ադրբեջանական գազի մատակարարման ապագան կասկածի տակ դրվեց այն ժամանակ, երբ 2009-2010թթ. Միջերկրական ծովի իսրայելական շելֆի առանձին հատվածներում հայտնաբերվեցին բնական գազի բավական խոշոր պաշարներ: Դա մեծ ազդեցություն ունեցավ դեպի Իսրայել բնական գազի արտահանումների նախկին նախագծերի ու ձեռք բերված պայմանավորվածությունների առումով: Միջերկրական ծովում, Հայֆա քաղաքից ոչ հեռու, բնական գազի խոշոր հանքավայրերի հայտնաբերումը մեծ վնաս հասցրեց առաջին հերթին Ռուսաստանից ու Ադրբեջանից դեպի Իսրայել բնական գազի մատակարարումներին: Արդյունքում՝ Իսրայելը ոչ միայն զգալիորեն լուծեց իր էներգետիկ անվտանգության հիմնահարցերը, այլև փորձեց նոր հայտնաբերված հանքավայրերի բնական գազն այլ երկրներ արտահանելու նոր ուղիներ գտնել:

Մասնավորապես, շատ էր խոսվում իսրայելական Լևիաֆան և Թամար հանքավայրերում հայտնաբերված բնական գազի զգալի պաշարների մասին:

Լևիաֆանը գտնվում է Միջերկրական ծովի իսրայելական շելֆում, Լիբանանի հետ Իսրայելի ծովային սահմանի մոտ՝ Հայֆա քաղաքից 135 կմ դեպի արևմուտք: Վերջինս նախնական տվյալներով ունի 453 մլրդ մ^3 գազի ապացուցված պաշարներ: 2011թ. մայիսին հեղինակավոր *Oil and Gas Investor* ամսագիրը իսրայելական Լևիաֆան հանքավայրը որակեց որպես 2010թ. արդյունքներով բնական գազի լավագույն հանքավայրն աշխարհում:

Պետք է փաստել, որ Լևիաֆան հանքավայրի վերամշակման և շահագործման կազմակերպման հարցում, սակայն, սկզբնական փուլում առաջացան որոշակի խնդիրներ. Իսրայելի հակամենաշնորհային վարչությունը հրաժարվեց ամերիկյան *Nobel* և իսրայելական *Delek* ընկերությունների կոնսորցիումին արդյունահանման թույլտվություն տալ, քանի որ վերջիններս դրանով կկարողանային վերահսկողություն սահմանել Լևիաֆան և Թամար հանքավայրերի նկատմամբ: Խնդիրը կարծես թե լուծում գտավ միայն վերջերս, երբ 2016թ. մայիսին Իսրայելի ղեկավարությունը *Nobel Energy*-ին և *Delek Group*-ին ներկայացրեց նոր համաձայնագիր՝ հանքավայրից գազի վերամշակման ու արտահանման վերաբերյալ: Արդյունքում՝ կոնսորցիումը հունիսին թույլտվություն ստացավ Լևիաֆան հանքավայրի վերամշակման համար: Նոր համաձայնագրում կետ էր ավելացվել, ըստ որի՝ Իսրայելի կառավարությունն իրավասու էր փոփոխել վերոնշյալ նավթագազային ընկերությունների հետ ձեռք բերված պայմանավորվածությունները:

Լևանտի ավազանի բնական գազի ընդհանուր ապացուցված և հնարավոր պաշարներն Իսրայելի և Կիպրոսի սահմաններում կազմում են 1,18 տրլն մ^3, որից 127 մլրդ մ^3՝ Կիպրոսի շելֆում և ավելի քան 1 տրլն մ^3՝ Իսրայելի հատվածում: Իսրայելի բնական գազի պաշարների շուրջ 88%-ը կենտրոնացված է վերը հիշատակված 2 հանքավայրերում. ավելի քան 60%-ը գտնվում է Լևիաֆան-ում, 27%-ը՝ Թամար հանքավայրում (տե՛ս *Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Լևանտի ավազանում բնական գազի ապացուցված պաշարները
(նշվում են համեմատաբար մեծ պաշարներով հանքավայրերը)

Հանքավայր	Երկիր, ընկերություն	2015թ. հունվ. 1 դրությամբ գազի պաշարները, տրլն մ³
Թամար	Իսրայել, *Noble և Delek*	283 մլրդ մ³
Դալիթ	Իսրայել, *Noble և Delek*	8,4 մլրդ մ³
Լևիաֆան	Իսրայել, *Noble և Delek*	620 մլրդ մ³
Թանին	Իսրայել, *Noble և Delek*	34 մլրդ մ³
Քարիշ	Իսրայել, *Noble և Delek*	51 մլրդ մ³
Աֆրոդիտա	Կիպրոս, *Noble և Delek*	127,4 մլրդ մ³
Noble Energy և *Delek Group* լիցենզիաներով պաշարները, ընդհ.	Իսրայել և Կիպրոս	1 152,6 մլրդ մ³

Աղբյուրը՝ ngv.ru "Газ восточного средиземноморья"

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԹՈՎ ՀԱՐՈՒՍՏ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎՐԱ

Արմեն Մանվելյան[*]

Էներգետիկ գործոնի ազդեցությունն անվտանգային դինամիկայի վրա միջազգային հարաբերությունների և անվտանգության ուսումնասիրության նորագույն ուղղություններից է: Նման հետազոտություններով փորձ է արվում հասկանալ էներգետիկ գործոնի ազդեցությունն անվտանգային միջավայրի վրա՝ տալ դրա ազդեցության չափումը և ստեղծված աշխարհառազմավարական իրավիճակի փոփոխությունը՝ կախված այդ գործոնից:

Էներգետիկ գործոնի անվտանգային բաղադրիչի ուսումնասիրության առաջին փորձերը կատարվել են անցած դարի 70-ական թվականներին, ինչն արտահայտվել է էներգետիկ անվտանգության և էներգետիկ աշխարհաքաղաքականության տեսությունների ի հայտ գալով: Սակայն խորքային, համակարգային հետազոտություններ, այնուամենայնիվ, գոյություն չունեն, ինչն այդ ուղղությամբ քայլեր կատարելու պահանջարկ է ստեղծում:

Անվտանգության հիմնախնդիրը

Անվտանգության հիմնախնդիրը 21-րդ դարի թիվ մեկ հարցն է, և իզուր չէ, որ շատ պետություններ փորձում են կառուցել անվտանգության իրենց համակարգերը՝ համագործակցելով այլ պետությունների հետ, կամ մաս կազմել արդեն ստեղծված ռազմաքաղաքական դաշինքների: Ժամանակը ցույց է տվել, որ միայնակ անվտանգության համակարգեր կառուցելը, առանց այլ պետությունների հետ ռազմավարական և խորքային համագործակցության ու համաձայնության՝ շատ դժվար է, և բոլորը փնտրում են ռազմաքաղաքական դաշնակիցներ անվտանգության կոլեկտիվ համակարգերի ստեղծման ու ամրապնդման համար: Սակայն շատ դեպքերում անգամ այդ դաշինքները

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, պ.գ.թ.:

չեն կարող անվտանգության միջազգային համակարգերի կայունության երաշխիք լինել, քանի որ տարածաշրջանային և միջազգային անվտանգության համակարգերի դինամիկան կարող է փոփոխվել՝ պայմանավորված նոր ուժերի և սպառնալիքների ի հայտ գալով: Այս օրերին անվտանգային համակարգերի դինամիկայի փոփոխությունը, օրինակ, Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում և աշխարհի շատ այլ շրջաններում հենց նմանատիպ փոփոխությունների վկայությունն է:

Պետք է հաշվի առնել, որ անվտանգային իրավիճակն աշխարհում փոփոխական է՝ պայմանավորված աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեղաշարժերով: Իսկ դրանց պատճառն անվտանգության դինամիկայի շարժն է, ինչին, իր հերթին, նպաստում են ներքին և արտաքին հիմնական խաղացողների՝ մեծ տերությունների, ինչպես նաև ներքին համակարգում ի հայտ եկող նոր ուժերի շահերի հակասությունները կամ համընկնումները:

Այս իրավիճակը կարելի է համարել բնական՝ հաշվի առնելով, որ այն տեղի է ունենում անվտանգային իրավիճակի վրա ազդող գործոնների ազդեցության աճով կամ նվազմամբ ու նաև նոր գործոնների ի հայտ գալով: Այսինքն՝ անվտանգային համակարգերի դինամիկան՝ դրանց շարժը, պայմանավորված է ազդեցության արտաքին և ներքին գործոնների փոփոխություններով: Անվտանգության արտաքին և ներքին համակարգերում գործող ուժերի ազդեցության աճի փոփոխությունն էլ պատճառ է հանդիսանում անվտանգության շարժի ուղղության փոփոխության: Այսինքն՝ գործող ուժերի ազդեցության աճը կամ նվազումը կարող է նպաստել, որ իրավիճակը կամ գնա դեպի կայունացում, կամ հակառակը՝ անվտանգային միջավայրը տանի դեպի անկայունություն:

Այսինքն՝ անվտանգային իրավիճակի փոփոխությունը՝ դրա դինամիկան, սրումը կամ կայունության հաստատումը, պայմանավորված է արտաքին և ներքին սպառնալիքների աճով կամ նվազմամբ: Իսկ արտաքին և ներքին սպառնալիքները կարող են տարբեր լինել՝ պայմանավորված տվյալ պետության աշխարհաքաղաքական դիրքով, աշխարհատնտեսական շահերով, հարևան պետությունների հետ հարաբերություններով, մեծ պետությունների շահերով:

Շատ կարևոր է նաև հասկանալ և կարողանալ ճիշտ գնահատել այդ պետությունների ընդունակությունը՝ դիմակայելու արտաքին և ներքին մարտա-

հրավերներին, քանի որ դիմակայության այդ պաշարից է կախված, թե տեղի ունեցող զարգացումներն ինչ ուղղությամբ կընթանան:

Վերջին տարիների իրադարձությունները՝ պատերազմները և հեղափոխություններն ու հեղաշրջումները, հատկապես Միջին և Մերձավոր Արևելքում ու Պարսից ծոցում, հուշում են, որ ոչ բոլոր պետություններն են պատրաստ դիմակայել այդ սպառնալիքներին ու պահպանել անվտանգության սեփական համակարգը: Դրա պատճառը նրանց միակողմանի կախվածությունն է տնտեսական կամ քաղաքական որոշակի գործոններից, ինչը նրանց դարձնում է առավել խոցելի նոր մարտահրավերների առջև:

Էներգետիկ գործոնը և անվտանգության ռեսուրսը

Անվտանգային դինամիկայի վրա ազդող կարևոր գործոններից է էներգետիկ գործոնը, հատկապես երբ խոսքը Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների մասին է, որտեղ կենտրոնացած են նավթի և գազի ամենամեծ պաշարներն աշխարհում: Էներգետիկ հիմնախնդիրն այս պետությունների համար կենսական նշանակություն ունի՝ պայմանավորված այդ երկրների տնտեսական և քաղաքական համակարգերով ու էներգակիրների արտահանման շուկաներից ու գնագոյացման մեխանիզմներից դրանց կախվածությամբ:

Էներգետիկ այդ գործոնը ստեղծում է միակողմանի կախվածություն ոչ միայն տնտեսական և քաղաքական, այլև անվտանգային առումով: Իսկ անվտանգության չափումը կատարվում է՝ հաշվի առնելով առկա էներգետիկ պաշարների ծավալները: Համապատասխանաբար՝ նավթի և գազի մեծ պաշարներ ունեցող պետությունների անվտագային հնարավորությունները շատ դեպքերում ավելի գերադասելի են, քան նվազ պաշարներ ունեցող պետություններինը:

Էներգետիկ գործոնի ազդեցությունն անվտանգային համակարգերի վրա ընդհանրապես և դրա դինամիկայի վրա՝ մասնավորապես կարևոր է հասկանալ ոչ միայն առանձին վերցրած պետության դեպքում, այլև էներգակիրներով հարուստ տարածաշրջաններում ևս: Այդ պետությունների և տարածաշրջանների անվտանգության համակարգերի ձևավորումը մեծապես կախված է նավթի և գազի արդյունահանման ու արտահանման ծավալներից և համաշխարհային շուկաներում դրանց ազդեցության աստիճանից: Անվտանգային հնարավորությունները գնահատելիս կարևոր է նաև այդ տիպի

պետություններում այդ ռեսուրսների գնահատման չափանիշը՝ ապացուցված նավթի ու գազի պաշարների հաշվարկման մեխանիզմը հասկանալը, հատկապես նավթի գների նվազման կամ աճման պայմաններում, ինչպես նաև կարևոր է էներգակիրների արդյունահանման և արտահանման հզորությունների շարունակականության մեխանիզմի գնահատումը:

Հայտնի է, որ նավթի ապացուցված պաշարները փոփոխական են՝ պայմանավորված նավթի գներով: Միջազգային շուկայում նավթի գների աճման դեպքում վերագնահատվում են նաև այդ պետությունների ապացուցված նավթի պաշարները՝ դեպի ավելացում, և հակառակը՝ նվազման դեպքում դեպի նվազում: Այսինքն՝ նավթի ապացուցված պաշարների աճի հետ միասին աճում է այդ պետությունների անվտանգության մակարդակը: Հասկանալի է, որ գների անկումն էլ փոփոխում է նաև նավթի ապացուցված պաշարների գնահատման մեխանիզմը՝ դեպի կրճատում, համապատասխանաբար նվազեցնելով նրանց անվտանգության մակարդակը:

Նավթի գների անկումը կարող է ազդել ոչ միայն առանձին վերցրած պետությունների, այլև էներգակիրներով հարուստ տարածաշրջանների անվտանգային դինամիկայի վրա, հանգեցնելով դրանց նվազմանը և ռազմական բախումների աճի հավանականության կտրուկ բարձրացմանը: Նավթային ռեսուրսի անվտանգային բաղադրիչը, սակայն, կախված է ոչ միայն նավթի գնից ու դրա պաշարներից, այլև այդ տիպի պետությունների կողմից նավթի արդյունահանման ու արտահանման հզորություններից:

Օրինակ, Վենեսուելան, որը տիրապետում է նավթի համաշխարհային պաշարների 17.7%-ին և այդ առումով զբաղեցնում է պատվավոր առաջին հորիզոնականը, չի հանդիսանում խոշոր նավթ արդյունահանող և արտահանող պետություն: Շատ պետություններ, օրինակ՝ Ռուսաստանը և ԱՄՆ-ը, տիրապետելով նավթի ավելի համեստ պաշարների, համապատասխանաբար՝ 6%, 3,2%, առանձին-առանձին հնգապատիկ ու վեցապատիկ ավելի նավթ են արդյունահանում, քան Վենեսուելան[1]: Այսինքն՝ այդ պետությունների անվտանգության և կայունության կարևորագույն բաղադրիչներն են՝

- նավթի ապացուցված պաշարները,
- արդյունահանման հզորությունները,
- արտահանման հնարավորությունները:

[1] BP Statistical Reviewof World Energy, June 2016, bp.com/statisticalreview

Այսինքն՝ այս երեք բաղադրիչների առկայությունը և դրանց ծավալներն են այն երաշխիքները, որոնք անվտանգության որոշակի պայմաններ են ապահովում այդ պետություններում: Շատ կարևոր են հատկապես արդյունահանման հզորությունները, որոնք, ինչպես նշեցինք, օրինակ, Վենեսուելայի դեպքում, չեն համապատասխանում վերջինիս հնարավորություններին, ինչը նվազեցնում է նրա անվտանգության մակարդակը:

Սակայն վերը նշված երեք գործոնների ազդեցությունն անվտանգային միջավայրի վրա ընդհանրապես և դրա դինամիկայի վրա՝ մասնավորապես էականորեն խախտվում է, երբ նավթի համաշխարհային շուկայում տեղի է ունենում գների անկում, ինչն իր հերթին ազդում է այդ պետությունների և տարածաշրջանների զարգացման կայունության վրա: Այդ պետությունների խորքային կախվածությունը նավթի գործոնից հանգեցնում է նրանց կախվածության նավթի գներից, և դրա շարժը շատ զգայուն է այդ պետությունների տնտեսական ու քաղաքական համակարգերի համար: Տեղի է ունենում նշված համակարգերի թուլացում, ինչն իր հերթին վտանգում է այդ պետությունների ներքին կայունությունը: Ներքին կայունության խախտումն էլ հանգեցնում է առկա և նոր ի հայտ եկող արմատական՝ կրոնական, քաղաքական կամ էթնիկ ուժերի ակտիվացմանը, ինչը կարող է նոր առճակատումների և բախումների պատճառ հանդիսանալ: Նավթի ցածր գները, եթե դրանք երկար են պահպանվում, կարող են հանգեցնել նաև արտաքին անվտանգային միջավայրի վատթարացման: Հայտնի է, որ նավթով հարուստ որոշ պետություններ և տարածաշրջաններ ունեն նավթի գնի վրա ազդելու իրենց որոշակի ռեսուրսը, որը կարող է փոխվել՝ պայմանավորված հենց նավթի գների անկմամբ:

Միտումներ

Նավթի ցածր գները հանգեցնում են նրան, որ այդ գների փոփոխման վրա ազդելու պետությունների հնարավորությունները կրճատվում են: Այսինքն՝ միջազգային նավթի շուկայում գնագոյացման մեխանիզմների վրա ազդեցության պաշարի նվազումը նավթով հարուստ պետությունների համար հանգեցնում է նաև արտաքին անվտանգային միջավայրի փոփոխության: Նավթի շուկայի անկայունությունն ազդում է նավթով հարուստ տարածաշրջանների վրա՝ հանգեցնելով նրանց նկատմամբ մեծ տերությունների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի փոփոխման:

Ներկայում Եմենում, Իրաքում, Սիրիայում, Լիբիայում շարունակվող պատերազմների պատճառներից մեկն էլ հենց վերը նշված իրավիճակն է՝ պայմանավորված էներգետիկ գործոնով, դրա ազդեցության թուլացմամբ՝ նավթի ցածր գների պայմաններում և գների վրա ազդելու՝ պետությունների ռեսուրսի նվազմամբ: Էներգետիկ շուկայում տիրող այլ իրավիճակում մեծ տերությունները շահագրգիռ կլինեին շուտափույթ կերպով խաղաղություն հաստատել, կամ ընդհանրապես կնախընտրեին չխառնվել այնտեղ գործող քաղաքական ռեժիմների գործերին՝ թույլ չտալու համար անկայունություն ոչ միայն այդ տարածաշրջաններում, այլև նավթի շուկայում: Սակայն ներկայում նավթի շուկայում տիրող այս իրավիճակում կայունության և խաղաղության հաստատումը քիչ հավանական է, իսկ անվտանգության դինամիկան սահուն կերպով ներքև է սլանում, ինչը կշարունակվի այդ տարածաշրջաններում այնքան ժամանակ, մինչև արմատապես չփոխվի իրավիճակը նավթի համաշխարհային շուկայում:

Տարածաշրջան

ԼՂՀ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. սեպտեմբեր

Հրայր Փաշայան[*]

Ղարաբաղյան հակամարտություն. Սեպտեմբերի 8-ին Մոսկվայում ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին, Ջեյմս Ուորլիքին և Պիեռ Անդրիոյին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայության հաղորդմամբ, քննարկվել են ղարաբաղյան կարգավորման հրատապ հարցեր, ներառյալ՝ մայիսի 16-ին Վիեննայի և հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին ձեռք բերված համաձայնությունների իրագործման հարցը, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմանին և շփման գծում տիրող ներկա իրավիճակը: Հակառակ եռանախագահների ջանքերին և պայմանավորվածություններին՝ պաշտոնական Բաքուն դարձյալ փորձում է առաջ տանել խնդրի լուծման սեփական պատկերացումները: Այդ օրերին ադրբեջանական տարբեր պաշտոնյաների կողմից կրկին հնչեցվեց այսպես կոչված գրավյալ տարածքներից հայկական զորքերի դուրսբերման պահանջը: ԱՀ պաշտպանության նախարար Զ.Հասանովը Ղուրբան բայրամ տոնի առթիվ զինծառայողներին հղված շնորհավորական ուղերձում հայտարարեց, որ «ադրբեջանական բանակն ամենասեղմ ժամկետներում պետք է ազատագրի օկուպացված տարածքները»: Իսկ ԱԳ նախարար Է.Մամեդյարովը, Պոտսդամում կայացած ԵԱՀԿ ԱԳՆ ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպմանը ելույթ ունենալով, դարձյալ բարձրացրեց հայկական զինված ուժերի դուրսբերման հարցը՝ ադրբեջանական մեկնությամբ վկայակոչելով միջազգային իրավունքը: Դրան զուգահեռ՝ շարունակվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջան-

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

քերի անարդյունավետությանն ուղղված քաղաքականությունը: Գործնականում դա արտահայտվում է Մինսկի խմբի ձևաչափի այլընտրանքային հարթակների որոնման և հակամարտության կարգավորման գործընթացում իր շահերն արտահայտող կառույցներում որոշումների ընդունմամբ: Այս շարքում, թերևս, արժե հիշատակել ԵԽԽՎ-ում տխրահռչակ Ռոբերտ Ուոլթերի հակահայկական զեկույցը: Այնուհետև Բաքուն ընտրեց Իսլամական համագործակցության կազմակերպությունը (ԻՀԿ), որը հասկանալի պատճառնելով չի թաքցնում Ադրբեջանի նկատմամբ համակրանքը: Ապրիլի 13-15-ը Ստամբուլում կայացած գագաթաժողովում ստեղծվեց Ղարաբաղի հարցով կոնտակտային խումբ, որի առաջին նիստը կայացավ սեպտեմբերի 20-ին՝ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 71-րդ նստաշրջանի շրջանակներում: Նրա աշխատանքների ուղղվածությունը դժվար չէ կանխատեսել: Ադրբեջանի ղեկավարության որդեգրած այս քաղաքականության համատեքստում կարելի է դիտարկել սեպտեմբերի 29-ին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հայտարարությունը, որը, խոսելով սառեցված հակամարտությունների կարգավորման հեռանկարների մասին, նշել է, թե Ղարաբաղյան հակամարտության հարցում դեռ հեռանկարներ չկան, քանի որ երկու երկրների առաջնորդները պատրաստ չեն, կա որոշակի լարվածություն:

Հայաստան-Արցախ. ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումների շրջանակներում սեպտեմբերի 1-ին Արցախ էր ժամանել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների ուղեկցությամբ: ԼՂՀ նախագահի և Արցախի թեմի առաջնորդ, գերաշնորհ տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հրավերով, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի նախագահությամբ սեպտեմբերի 6-ին Ստեփանակերտում աշխատանքն է սկսել Գերագույն հոգևոր խորհրդի հերթական ժողովը: Եռօրյա ժողովի ընթացքում քննարկվել են Ազգային-եկեղեցական ժողովի, Գերագույն հոգևոր խորհրդի կանոնադրությունների մշակման, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության լրամշակման ընթացքին վերաբերող հարցեր, ներկայացվել են զեկույցներ եկեղեցական կառույցների և թեմերի գործունեության վերաբերյալ: Օգոստոսի սկզբին պաշտոնական այցով Ստեփանակերտում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատվիրակությունը՝ նախարար Արմեն Երիցյանի գլխավո-

րությամբ: Այցելելով ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայություն՝ հերթական անակնկալը մատուցվեց արցախցի գործընկերներին՝ նվիրելով «ՈՒԱԶ» մակնիշի նոր մեքենաներ: Հայկական զույգ հանրապետությունների համագործակցության շրջանակներում օգոստոսի 8-ին Արցախում էր ՀՀ զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ Արտավազդ Հարությունյանը, օգոստոսի 9-ին՝ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը: ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումներում քննարկվել են համանուն գերատեսչությունների փոխգործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Սեպտեմբերի 21-ին ԼՂՀ նախագահը Երևանում մասնակցել է Հայաստանի Հանրապետության 25-րդ տարեդարձի կապակցությամբ կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին, ներկա գտնվել Անկախության տոնի զորահանդեսին: Այնուհետև Բակո Սահակյանը Սերժ Սարգսյանի հետ միասին հանդիպում է ունեցել Սփյուռքում գործող մի շարք կառույցների ղեկավարների հետ և քննարկել համահայկական նշանակության հարցեր: ԼՂՀ վարչապետը սեպտեմբերի 23-ին ընդունել է «Արմգենիա» հիմնադրամի մի խումբ անդամների՝ կառույցի համահիմնադիր, «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Սևակ Ավագյանի գլխավորությամբ: Հյուրերը ներկայացրել են հիմնադրամի ծրագրերը, հետազոտության արդյունքները և առաջարկել Արցախում սկսել փորձարարական ծրագիր՝ 3-4 սերունդ արցախյան ծագում ունեցող անձանց գենետիկական հետազոտություն անցկացնելու նպատակով: Հետազոտությունների արդյունքների շնորհիվ հնարավորություն կընձեռվի հիվանդությունների կանխարգելման և բուժման գործընթացներում արդյունավետորեն կիրառել գիտության վերջին նվաճումները:

ԼՂՀ-Սփյուռք. Հայրենիք-Սփյուռք համագործակցության շրջանակներում Արցախում գտնվող «Տավիթյան» հիմնադրամի հիմնադիր և նախագահ Ասո Տավիթյանին սեպտեմբերի 6-ին հյուրընկալել են ԼՂՀ նախագահն ու արտգործնախարարը: Քննարկվել են Արցախում տարբեր ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր: Բարձր է գնահատվել հիմնադրամի գործունեությունը ԱՄՆ առաջատար բուհերում կրթություն ստանալու հարցում Արցախի ուսանողներին աջակցելու համար, որի արդյունքում Արցախն ունեցավ բազմաթիվ որակյալ կադրեր: Արցախին ցուցաբերվող աջակցության շրջա-

նակներում, սփյուռքահայ մի շարք հայրենակիցներ շարունակեցին իրենց բարեգործական առաքելությունը: ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայրենակիցները ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության Մարտունու շրջանային փրկարարական բաժնին նվիրեցին «ԿամԱԶ» մակնիշի բարձր անցանելիության հատուկ հրշեջ մեքենա: Սեպտեմբերի 18-ին Արցախում էր Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության պատվիրակությունը՝ ատենապետ Համբիկ Սարաֆյանի գլխավորությամբ, 19-ին՝ Հայ դատի Ավստրալիայի ներկայացուցիչ Գրիգոր Սողոմոնյանը, 24-ին՝ Ռամկավար ազատական կուսակցության պատվիրակությունը՝ ատենապետ Սերխիո Նահապետյանի գլխավորությամբ, 26-ին՝ Կանադայից Արցախ ժամանած հայ ուխտավորների խումբը՝ Աբգար եպիսկոպոս Հովակիմյանի առաջնորդությամբ: ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումներում քննարկվել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, Հայրենիք-Սփյուռք կապերին, Արցախի ներքին և արտաքին քաղաքականությանը և միջազգային ատյաններում Արցախի մասին ճշմարիտ տեղեկատվության ներկայացմանն առնչվող հարցեր: Բարձր է գնահատվել Սփյուռքի դերն Արցախի վերականգնման և զարգացման գործում, շեշտվել է, որ նման ուժեղ թիկունքի առկայությունն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդին առավել վստահ քայլերի մղում: Արցախի Հանրապետական բժշկական կենտրոնի բացումից երկու տարի անց «Տաշիր» հիմնադրամը հերթական ազգանվեր քայլը կատարեց. սեպտեմբերի 20-ին հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ 200 մլն դրամ արժողությամբ բժշկական կենտրոնի բարեկարգված տարածքի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էր Արցախի բարձրաստիճան ղեկավարությունը՝ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ: Բարերար Սամվել Կարապետյանը բոլոր հայերի պարտքը համարեց հայրենիքին աջակցություն ցուցաբերելը և խոստացավ այսուհետ ևս լուրջ մասնակցություն ունենալ Արցախի զարգացման գործին:

Բելգիա-Արցախ. Ադրբեջանի Հանրապետության՝ Արցախին միջազգային քաղաքական գործընթացներից մեկուսացնելուն ուղղված քաղաքականության պայմաններում կարևոր նշանակություն ունեն տարբեր ձևաչափերով արտաքին աշխարհի հետ շփումները, ինչը Ղարաբաղյան հակամարտության իրական կերպարը միջազգային հանրությանը ներկայացնելու ուղինե-

րից մեկն է: Այս շրջանակներում սեպտեմբերի 3-ին Արցախում էին Բելգիայի դաշնային և Բրյուսելի շրջանային խորհրդարանների մի խումբ պատգամավորներ: ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումներում քննարկվել են երկու երկրների միջև խորհրդարանական կապերի զարգացմանն առնչվող հարցեր: Կարևորվել է Բելգիայի խորհրդարանականների այցը մեր երկիր՝ ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի տոնական միջոցառումների շրջանակներում, այն դիտարկելով որպես անկեղծ և անշահախնդիր բարեկամության և մեր հաջողությունների առանցքային բաղադրամասերից մեկը: Չեն ուշացել նաև Բելգիա փոխադարձ այցելությունները: Սեպտեմբերի 27-ին Կարեն Միրզոյանը հանդիպել է Եվրամիություն-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար կազմի հետ՝ խմբի նախագահ Էլենի Թեոխարուսի գլխավորությամբ, այնուհետև՝ Եվրախորհրդարանում Արցախի հետ բարեկամության խմբի ղեկավար Ֆրանկ Էնգելի և մյուս անդամների, սեպտեմբերի 28-ին՝ «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության տնօրեն Դիոգո Պինտոյի և Բելգիայի խորհրդարանի անդամ, ԵԽԽՎ պատգամավոր Պիետ դե Բրույնի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել է համատեղ ծրագրերի, եվրոպական տարբեր կառույցների, այդ թվում նաև Եվրոպական խորհրդարանի հետ կապերի խորացման, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ստեղծված իրավիճակին, ապրիլի 2-5-ն Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի դեմ սանձազերծված լայնածավալ ռազմական ագրեսիային և դրա հետևանքներին առնչվող հարցերի լայն շրջանակ: Այցի ընթացքում Կարեն Միրզոյանը որպես հիմնական բանախոս Եվրախորհրդարանի շենքում հանդես է եկել ելույթով՝ Ֆրանկ Էնգելի կողմից կազմակերպված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ պետականաշինության 25 տարին անկայուն տարածաշրջանում» խորագրով կլոր սեղան–քննարկմանը:

Սեպտեմբերի վերջին եռօրյա աշխատանքային այցով Բելգիայի Թագավորությունում էր նաև Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունը: Սեպտեմբերի 27-ին պատվիրակության անդամները Եվրոպական միության խորհրդարանում հանդիպել են ԵՄ-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Էլենի Թեոխարուսի և խմբի անդամների հետ, մասնակցել Արցախի Հանրապետություն-Եվրախորհրդարան բարեկամության խմբի նիստին, սեպտեմբերի 28-ին հանդիպել «Հայաստանի եվրոպացի բարե-

կամներ» կազմակերպության նախագահ Դիոգո Պինտոյի և մյուս անդամների հետ: Օրվա երկրորդ կեսին Արցախի պատգամավորներն այցելել են Ֆլամանդական խորհրդարան:

Ֆրանսիա-Արցախ. Սեպտեմբերի 20-ին Արցախում էր Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի պատվիրակությունը՝ քաղաքապետ Լյուկ Կառվունասի գլխավորությամբ, 26-ին՝ «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի նախագահ, Ֆրանսիական Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա Ռոշբլուանը և նրան ուղեկցող անձինք: ԼՂՀ նախագահի, ԱԺ խոսնակի և պաշտոնական այլ շրջանակների հետ հանդիպումներում քննարկվել են Ալֆորվիլի և Արցախի մի շարք քաղաքների փոխգործակցությանը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանը, Ֆրանսիայի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի դերակատարությանը, խորհրդարանական դիվանագիտությանն առնչվող այլ հարցեր: Բարձր է գնահատվել «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամություն շրջանակի գործունեությունն Արցախին սատարելու հարցում: Նույն օրը ԼՂՀ վարչապետն ընդունել է «Էսպեէֆա» բարեգործական կազմակերպության անդամներին և Փարիզի ու Ֆրանսիայի Ռոն-Ալպ շրջանի պատվիրակություններին՝ բարերար Ժաք Մաթոսյանի և «Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակի նախագահ, Ֆրանսիական Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա Ռոշբլուանի գլխավորությամբ: Ա.Հարությունյանը կարևորել է ֆրանսահայերի և ֆրանսիացի գործիչների մասնակցությունը տարբեր նախագծերին, շեշտել «Էսպեէֆա» կազմակերպության և Ֆրանսուա Ռոշբլուանի էական դերն Արցախի հասարակական, քաղաքական կյանքում:

Հետաքրքիր այլ իրադարձություններ էլ են տեղի ունեցել Արցախում: Սեպտեմբերի 15-ին Արցախում էին «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության նորանշանակ տնօրեն Դիոգո Պինտոն և գլխավոր քարտուղար Հովհաննես Գրիգորյանը: ԼՂՀ ԱԺ նախագահի և արտգործնախարարի հետ հանդիպումներում բարձր է գնահատվել կազմակերպության հետևողական գործունեությունը՝ ուղղված եվրոպական հանրության իրազեկվածության բարձրացմանն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման և ԼՂՀ-ում ընթացող ժողովրդավարական գործընթացներին: Մտքեր են փոխանակել այդ ուղղությամբ համագործակցության ընդլայնման հնարավորու-

թյունների և հեռանկարների շուրջ: ԼՂՀ ԱԺ նախագահը սեպտեմբերի 27-ին ընդունել է 85-րդ այցով Արցախ ժամանած բարոնուհի Քերոլայն Քոքսին և Մարդասիրական օգնություն բարեգործական կազմակերպության (*HART-Humanitarian Aid Relief Trust*) անդամներին: «Արցախը ճանաչելի է դառնում նաև Ձեզանով, քանզի ամեն անգամ Դուք բարեկամների նոր խումբ եք բերում Արցախ: Այդ հանգամանքը շատ կարևոր է, քանի որ Ադրբեջանն անընդհատ փորձում է ապակողմնորոշել միջազգային կառույցներին՝ սուտ և սխալ տեղեկատվություն տարածելով մեր երկրի մասին»,- նշել է Ա.Ղուլյանը: Քննարկվել են խորհրդարանական կապերի ընդլայնման, մարդու իրավունքների պաշտպանության, Ստեփանակերտում գործող վերականգնողական կենտրոնի գործունեության, ապրիլյան պատերազմական գործողություններից հետո փաստերի հավաքագրման և մարդասիրական բնույթի այլ թեմաներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. սեպտեմբեր

Ջոնի Մելիքյան*

Վրաստանի արտաքին քաղաքական իրադարձությունները սեպտեմբերին կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի. Վրաստանի ղեկավարության պաշտոնական և աշխատանքային ուղևորություններ (վարչապետի պաշտոնական այցը Հայաստան սեպտեմբերի 5-ին; վարչապետի աշխատանքային այցը ԱՄՆ սեպտեմբերի 19-22-ին), օտարերկրյա բարձրաստիճան անձանց այցելությունները Վրաստան (Հռոմի պապ Ֆրանցիսկոսի պաշտոնական այցը սեպտեմբերի 30-հոկտեմբերի 1-ին; Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ժան-Իվ լը Դրիանի պաշտոնական այցը սեպտեմբերի 10-12-ին; Շվեյցարիայի համադաշնության Ազգային խորհրդի նախագահ Քրիստ Մարկվալդերի պաշտոնական այցը սեպտեմբերի 5-6-ին), ինչպես նաև պաշտոնական Թբիլիսիի արտաքին քաղաքական օրակարգի առավել հրատապ իրադարձությունները (հայ-վրացական հարաբերություններ և Վրաստան-Չինաստան փոխհարաբերություններ)։ Անդրադառնանք Վրաստանի սեպտեմբերյան արտաքին քաղաքական ամենակարևոր իրադարձություններին։

Անցած ամսվա արտաքին քաղաքական իրադարձությունների շարքում ուշագրավ է Վրաստանի կառավարության ղեկավար Գեորգի Կվիրիկաշվիլու աշխատանքային այցը ԱՄՆ (սեպտեմբերի 19-22), որտեղ նա սեպտեմբերի 21-ին ելույթ ունեցավ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում։ Այցի ընթացքում Վրաստանի վարչապետը հանդես եկավ նաև բարձր մակարդակի մի քանի այլ հանդիպումներում, որոնք կազմակերպվել էին Էստոնիայի, Վրաստանի, Կորեայի Հանրապետության, UNDP-ի, ՀԱՀ-ի, Ֆրանսիայի կողմից։ Նա ելույթ է ունեցել նաև «Ինովացիոն ֆինանսավորումը 2030թ.՝ կայուն զարգացման շրջանակներում» թեմայով բարձրամակարդակ հանդիպմանը։

Այցի շրջանակներում Գեորգի Կվիրիկաշվիլին մասնակցել է մի քանի պաշտոնական ընդունելությունների, որոնք տեղի են ունեցել ի պատիվ

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ։

պատվիրակությունների ղեկավարների՝ ԱՄՆ նախագահի և նրա տիկնոջ, ՄԱԿ գլխավոր քարտուղարի և նրա տիկնոջ անունից: Նա մասնակցել է նաև ԱՄՆ Ատլանտյան խորհրդի կազմակերպած ընդունելությանը: Գ.Կվիրիկաշվիլին մի շարք կարևոր երկկողմ հանդիպումներ է ունեցել ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Էնթոնի Բլինքենի, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալթեր Շթայնմայերի, Բելգիայի Թագավորության վարչապետ Շառլ Միշելի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրահանձնաժողովի առաջին փոխնախագահ Ֆրանց Թիմերմանսի, Եվրահանձնաժողովի փոխնախագահ, Եվրամիության արտաքին և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, ինչպես նաև Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկայի ու Մոլդովայի վարչապետ Պավել Ֆիլիպի հետ:

Վրաստան-Հայաստան. Անցած ամիս հայ-վրացական հարաբերություններն ամրության փորձության ենթարկվեցին: Հերթական անգամ նման ճգնաժամային իրավիճակի հիմնական պատճառ դարձավ Լեռնային Ղարաբաղը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառմանը, սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտ էին եկել նաև կիսաճանաչված Աբխազիայի և Հարավային Օսիայի, ինչպես նաև չճանաչված Մերձդնեստրի պատվիրակությունները: Նշված պատվիրակությունների այցելությունը կարող էր շարքային «տհաճ» իրադարձություն մնալ պաշտոնական Թբիլիսիի համար և մոռացվել, եթե չլիներ աբխազական պատվիրակության այցի տեղեկատվական լուսաբանումը: Աբխազական պատվիրակության (որը գլխավորում էր Աբխազիայի փոխնախագահ Վիտալի Գաբնիան, պատվիրակության կազմում էր նաև Աբխազիայի Ազգային ժողովի փոխնախագահ Վաղարշակ Կոսյանը) անդամ, արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնակատար Կան Տանիան *Facebook*-ի իր էջում հրապարակել էր լուսանկար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի մոտ տեղի ունեցած ընդունելությունից, որտեղ, ինչպես պարզաբանում է Տանիան, աբխազական պատվիրակությունը ողջունում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին և ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին:

Աբխազական պատվիրակության հետ Հայաստանի նախագահի՝ նույն լուսանկարում գտնվելու փաստը, թեկուզև Լեռնային Ղարաբաղի տարածքում, որտեղ Հայաստանի նախագահը նույնպես գտնվում էր հյուրի կարգա-

վիճակում, վրդովել էր վրացական հասարակությանը, քաղաքական գործիչներին և Վրաստանի ԱԳՆ-ին: Այս տեղեկատվությանն անհապաղ արձագանքեց վրացական «Եվրոպական դեմոկրատներ» կուսակցության առաջնորդ Պաատա Դավիթայան, որը սույն փաստն անվանեց «զայրացուցիչ» և «անընդունելի»: Քաղաքական գործիչը դիմեց Վրաստանի ԱԳՆ-ին՝ կոչ անելով «համապատասխան միջոցներ ձեռնարկել», ներառյալ Վրաստանում Հայաստանի դեսպանին ԱԳՆ կանչելն ու «նրանից բացատրություններ պահանջելը, թե ինչու է հարևան բարեկամական երկրի նախագահը հանդիպել Աբխազիայի պատվիրակության հետ»:

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունում նույն օրը հայտարարեցին, թե պաշտոնական Երևանը կտրականապես հերքում է հանդիպման փաստը, իսկ Վրաստանի փոխարտգործնախարար Գիգի Գիգիաձեի խոսքով՝ Հայաստանում Վրաստանի դեսպանը թեմայի շուրջ խոսել է Հայաստանի փոխարտգործնախարարի հետ:

Ինչպես պարզաբանում է հայկական կողմը, ոչ մի հանդիպում օկուպացիոն ռեժիմի ներկայացուցիչների հետ չի եղել: Դա հերթական քաղաքական շահարկում է, որին հաճախ են դիմում օկուպացիոն ռեժիմի ներկայացուցիչները»,- նշել է Վրաստանի ԱԳ փոխղեկավարը:

Վրացական ԶԼՄ-ին մեկնաբանություն տվեց նաև վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին, ըստ որի՝ «Հայաստանը եղել և մնում է Վրաստանի տարածքային ամբողջականության կողմնակիցը»: «Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանը հայտարարություն է արել այն մասին, որ ոչ մի հանդիպում և, առավել ևս, պաշտոնական բանակցություն չի եղել: Հայաստանը եղել և մնում է Վրաստանի կողմնակիցը, երկրի տարածքային ամբողջականության կողմնակիցը: Մնացած ամեն բան ընդամենը քաղաքական շահարկում է»,- ասել է Վրաստանի վարչապետը:

Արդեն հաջորդ օրը՝ սեպտեմբերի 3-ին, Հայաստանի ԱԳՆ ղեկավար Էդվարդ Նալբանդյանը և Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեն ԵՄ և «Արևելյան գործընկերության» երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպման (Բրատիսլավա) ժամանակ աշխատանքային հանդիպում են ունեցել, որտեղ քննարկել են ինչպես միջպետական օրակարգի հարցեր, այնպես էլ իրավիճակը՝ կապված աբխազական պատվիրակության Ստեփանակերտ կատարած այցելության հետ: Վրաստանի ԱԳՆ տեղե-

կատվության համաձայն՝ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Էդվարդ Նալբանդյանը վրաց գործընկեր Միխայիլ Ջանելիձեին հավաստիացրել է, որ «Հայաստանի դիրքորոշումն անսասան է Վրաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վերաբերյալ»: Հաղորդագրության մեջ նշվել է, որ երկու երկրների ԱԳՆ ղեկավարները «հաստատել են երկու երկրների բարիդրացիական հարաբերությունները և քննարկել հարցեր՝ կապված Վրաստանի վարչապետի Հայաստան կատարելիք այցի հետ»:

Չնայած ամսվա սկզբի բավական բարդ տեղեկատվական ֆոնին՝ սեպտեմբերի 5-ին առաջին պաշտոնական այցով Երևան ժամանեց Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին: Այս այցը դարձավ վրացական կառավարության ղեկավարի տարածաշրջանային պաշտոնական այցերի շղթայի շարունակությունը: Ավելի վաղ նա պաշտոնական այցով եղել էր Թուրքիայում (հուլիսի 19) և Ադրբեջանում (31 օգոստոսի): Մեկօրյա այցի ընթացքում Գեորգի Կվիրիկաշվիլին հանդիպել է իր հայ գործընկերոջ՝ Հովիկ Աբրահամյանի հետ և քննարկել քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային ոլորտի հարցեր: Հայաստանի և Վրաստանի վարչապետները պատրաստակամություն են հայտնել առավել մեծ աջակցություն ցուցաբերել երկու երկրների տնտեսական համագործակցությանը: Երես առ երես հանդիպումից հետո տեղի է ունեցել ավելի լայն ձևաչափով քննարկում՝ երկու պատվիրակությունների մասնակցությամբ, ընդգծվել է վրաց-հայկական միջկառավարական հանձնաժողովի նիստի անցկացման կարևորությունը, ինչպես նաև քննարկվել են տարածաշրջանային նախագծեր: Վրացական պատվիրակության կազմում էին փոխվարչապետ, էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Կախա Քալաձեն, ԱԳՆ փոխնախարար Դավիթ Դոնդուան, վրաց դիվանագետներ (այդ թվում և Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, որը Ախալքալաքի ընտրատարածքի պատգամավորի մեծամասնական թեկնածուն է): Հայկական պատվիրակությունում էին փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրացիայի և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, էներգետիկայի և բնական պաշարների նախարար Լևոն Յոլյանը, տրանսպորտի նախարար Գագիկ Բեգլարյանը, հայ դիվանագետներ և պատգամավորներ:

Երևան կատարած պաշտոնական այցի ընթացքում Վրաստանի կառավարության ղեկավարին ընդունեց նաև Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, որի հետ Գեորգի Կվիրիկաշվիլին քննարկեց երկու երկրների առևտրատնտեսական, տրանսպորտային և մշակութային-հումանիտար համագործակցության հարցեր: Վրաստանի կառավարության տեղեկատվությամբ՝ կողմերը հույս են հայտնել, որ Վրաստանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների պոտենցիալը «գործի կդրվի ամբողջությամբ»: Հանդիպման ընթացքում նշվել է նաև համագործակցության կարևորությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսին են հաղորդակցությունները, զբոսաշրջությունը և գյուղատնտեսությաւնը:

Ամսվա կեսին՝ սեպտեմբերի 13-ին, աշխատանքային այցով Վրաստան մեկնեց հայկական պատվիրակությունը՝ կրթության նախարարի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանի գլխավորությամբ: Այցի ընթացքում կողմերը քննարկեցին համատեղ կրթական նախագծերի հեռանկարները, հայ-վրացական աշխատանքային այնպիսի խմբերի ստեղծման հարցերը, որոնք աշխատելու են միջնակարգ և հանրակրթական կրթության, գիտության և բարձրագույն կրթության ոլորտներում, ինչպես նաև նշեցին կրթական փոխանակման անհրաժեշտությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Լևոն Մկրտչյանն իր հերթին վստահություն հայտնեց, որ առաջիկայում տեղի կունենա վրացական պատվիրակության պատասխան այցելությունը Հայաստան:

Վրաստան-Չինաստան. Սեպտեմբերը նշանավորվեց նաև վրաց-չինական հարաբերությունների խորացմամբ: Չինաստանն արագ և վստահ քայլերով մտնում է Հարավկովկասյան տարածաշրջան՝ պաշտոնական Թբիլիսիի հետ տնտեսական կապերի ուժեղացման միջոցով: Սեպտեմբերի 12-ին Չինաստանում տեղի ունեցավ Վրաստանի էկոնոմիկայի նախարարության և Չինաստանի առևտրի նախարարության ներկայացուցիչների վերջին աշխատանքային հանդիպումը, որի արդյունքներով Թբիլիսին հաջողությամբ ավարտեց բանակցությունները Պեկինի հետ: Վրաստանը դառնալու է առաջին երկիրը տարածաշրջանում, որը հաստատելու է ազատ առևտրի ռեժիմ ՉԺՀ-ի հետ: Բանակցությունները սկսելու որոշումը կայացվել էր 2015թ. սեպտեմբերի 10-ին, չինական Դալյան քաղաքում տեղի ունեցած համաշխարհային տնտեսական համաժողովում (երկու երկրների վարչապետների հանդիպման ժամանակ), իսկ 2015թ. դեկտեմբերի 10-ին Պեկինում Չինաստանի

առևտրի նախարարության և Վրաստանի էկոնոմիկայի նախարարության միջև համագործակցության մասին Հուշագիր ստորագրվեց, որը նախատեսում էր սկսել բանակցությունները: «Վրաստանը դարձավ առաջին երկիրը, որը կարողացավ ռեկորդային ժամկետում՝ յոթ ամսում ավարտել բանակցությունները Չինաստանի հետ ազատ առևտրի ռեժիմի մասին»,- ասել է Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Դմիտրի Կումսիշվիլին:

Առկա տեղեկատվության համաձայն՝ ըստ համաձայնագրի պայմանների, համաձայնագրի կնքումից հետո արտադրատեսակների 95,5%-ը, որոնց թվում նաև գինիները, հանքային ջուրը և գյուղմթերքները, Վրաստանից կարելի է արտահանել չինական շուկա «զրոյական սակագնով և առանց անցումային շրջանի»: Կումսիշվիլին ասել է, որ սա աննախադեպ երևույթ է, երբ Չինաստանը հնարավորություն է ընձեռում զրոյացնել մաքսային սակագները գինիների և գյուղմթերքների համար՝ առանց որևէ անցումային շրջանի:

Այսպիսով, հոկտեմբերի սկզբին Թբիլիսի կայցելի ՉԺՀ առևտրի նախարարը, այցի ընթացքում էլ կստորագրվի ազատ առևտրի մասին Հուշագիրը: Այնուհետև փաստաթղթի տեքստը փորձարկում կանցնի և կստորագրվի երկու երկրների կողմից, ինչից հետո Չինաստանի հետ Վրաստանի ազատ առևտրի մասին համաձայնագիրը կմտնի ուժի մեջ: Վրացական կողմը սպասում է, որ Պեկինի հետ համաձայնագիրը կստորագրվի դեկտեմբերին, այն կգործարկվի 2017թ. կեսին:

Մեկնաբանելով այս իրադարձությունը՝ Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին ասել է, որ համաձայնագիրը Չինաստանի հետ «վիթխարի ձեռքբերում է, որը մեծ նշանակություն կունենա Մետաքսի ճանապարհի զարգացման համար»:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. սեպտեմբեր

Ռոման Կարապետյան*

Չնայած Իրանի արտաքին քաղաքականության ղեկավարներն ամբողջապես բավարարված չեն միջուկային համաձայնագրի հակառակ բևեռում կանգնած երկրների՝ դրա պահանջների կատարումից, ակնհայտ է, որ երկրի տնտեսական կապերը մեծ առաջընթաց են գրանցել: Միջուկային համաձայնագրի առաջին դրական արդյունքներն արդեն հաշվվել են եվրոպացիների կողմից. Իրանի և Եվրոպական միության միջև առևտրաշրջանառության ծավալները գրեթե կիսով չափ ավելացել են և 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում հասել $5,1 մլրդ-ի՝ 43%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Սակայն այս թվերը չեն կարող բավարարել իրանական կողմին, քանի որ նշված ցուցանիշներն ապահովվել են դեպի Եվրոպա նավթի արտահանման ծավալների մեծացման շնորհիվ, մինչդեռ տնտեսության մյուս ճյուղերում առաջընթացը խիստ դանդաղում է: Եվրոպական երկրներից Շվեդիան, Ալբանիան և Հունաստանը կդառնան իրանական նավթի նոր գնորդները, իսկ Նիդերլանդներն առաջին գործուն քայլերն է անում Իրանի հետ բանկային ոլորտում համագործակցության զարգացման ուղղությամբ: Ինչպես հաղորդում են իրանական պաշտոնական աղբյուրները, երկիրը մոտ է նավթի արդյունահանման նախապատժամիջոցային ցուցանիշներին: Այդ ցուցանիշները հնարավոր կդառնա ապահովել նաև իրանական նավթի հիմնական գնորդների՝ Չինաստանի և Հնդկաստանի շնորհիվ, որոնք նաև պատրաստվում են ներդրումներ կատարել իրանական նավթարդյունաբերության ոլորտում:

Իրան-Արևմուտք. Արևմուտքի հետ երկխոսության հիմնական թեման շարունակում է մնալ միջուկային համաձայնագրի կատարման հարցը: Պաշտոնական Թեհրանն առիթը բաց չի թողնում հայտարարելու, որ կատարում է համաձայնագրով նախատեսված պարտավորությունները, սակայն համա-

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

ձայնագրի մյուս կողմում կանգնած երկրները կամ դանդաղում են, կամ էլ չեն կատարում իրենց պարտավորությունները: Սեպտեմբերի 14-ին եռօրյա պաշտոնական այցով Բրյուսել ժամանեց Իրանի փոխնախագահ, Ատոմային էներգիայի կազմակերպության տնօրեն Ալի Աքբար Սալեհին: Իրանցի պաշտոնյան հանդիպել է ԵՄ արտաքին հարցերով գլխավոր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի հետ: Կողմերը քննարկել են ինչպես միջուկային համաձայնագրերի կատարմանը, այնպես էլ տարածաշրջանի անվտանգությանն ու կայունությանն առնչվող հարցեր:

Բավական դիտարժան զարգացումներ գրանցվեցին Իրանի և Մեծ Բրիտանիայի միջև հարաբերություններում: Ամսվա մեկնարկին Միացյալ Թագավորությունը մեղադրանքներ հնչեցրեց իրանական կողմի՝ Մերձավոր Արևելքում վարվող քաղաքականության հասցեին, ինչին ի պատասխան իսլամական հանրապետության արտաքին գործերի գերատեսչության ներկայացուցիչ Բահրամ Կասեմին հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան պետք է ավելի սթափ գնահատի տարածաշրջանային իրավիճակը և ճիշտ գնահատականներ տա: Այս միջադեպից ընդամենը չորս օր անց երկու երկրները բարձրացրին դիվանագիտական հարաբերությունների մակարդակը՝ գործերի ժամանակավոր հավատարմատարից մինչև արտակարգ և լիազոր դեսպան:

Սեպտեմբերի 5-ին պաշտոնական այցով Թեհրան ժամանեց Ֆրանսիայի Ազգային ժողովի խոսնակ Կլոդ Բարտոլոն: Վերջինս հանդիպումներ ունեցավ իրանցի գործընկերոջ, Իրանի նախագահի, Իրանի ազգային անվտանգության խորհրդի ղեկավարի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Կողմերը քննարկել են երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցեր՝ նշելով, որ այդ ուղղությամբ ամենակարևոր քայլը կլինի առկա պայմանագրերը գործի մեջ դնելը: Բարտոլոն նաև շեշտել է Իրանի բարձր դերակատարությունը տարածաշրջանի անվտանգության և կայունության ապահովման հարցում:

Ավելի ուշ Իրանի հետախուզության նախարար Մահմուդ Ալավին այցելել է Բեռլին, որտեղ գերմանացի գործընկերների հետ քննարկել է ահաբեկչության դեմ համատեղ պայքարին վերաբերող հարցեր: Կողմերը պայմանավորվել են միասնական ջանքեր գործադրել ահաբեկչական խմբավորումների հայտնաբերման գործում: Սակայն, միևնույն ժամանակ, կարելի է փաստել, որ Գերմանիայի հետ քաղաքական հարաբերությունները դեռևս չեն կարգա-

վորվում, ինչը պայմանավորվում է իսրայելական գործոնով. Գերմանիան նախկինում մի քանի անգամ հայտարարել է, որ Իրանի հետ հարաբերությունների զարգացման հիմնական նախապայմանը վերջինիս կողմից Իսրայելի ճանաչումն է: Առաջիկա ամսում նախատեսվում է արդեն երկու երկրների բարձրաստիճան ղեկավարների հանդիպում:

Կարևոր իրադարձություններից մեկը Նյու Յորքում անցկացված ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 71-րդ նստաշրջանն էր: Այն բավական արդյունավետ ստացվեց իրանական դիվանագիտության համար, քանի որ հնարավորություն ստեղծվեց ամենաբարձր հարթակից խոսել իսլամական հանրապետության հիմնական մտահոգությունների մասին: Իր ելույթում նախագահ Ռոհանին մեղադրել է մեծ պետություններին Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակի համար՝ այն անվանելով սխալ քաղաքական կառավարման հետևանք: Ռոհանին հանդիպումներ է ունեցել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Բուլղարիայի, Ճապոնիայի նախագահների հետ: Քննարկումների հիմնական թեմաներն են եղել երկկողմ փոխհարաբերություններին, տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերը: Իրանի նախագահը հանդիպում է ունեցել նաև միջուկային համաձայնագիրը ստորագրած վեցնյակի երկրների հետ: Հանդիպման ընթացքում Ֆեդերիկա Մոգերինին ասել է, որ Իրանն ու վեցնյակի երկրները լիովին կատարում են իրենց պարտավորությունները, ինչի մասին են վկայում ԱԷՄԳ երեք զեկույցները: Ինչ վերաբերում է Իրանի հրթիռային փորձարկումներին, ԵՄ արտաքին հարցերով պատասխանատուն ասել է, որ դրանք չեն խախտում միջուկային համաձայնագիրը, սակայն, միևնույն ժամանակ, չեն բխում տարածաշրջանում իրավիճակը կայունացնելու հրամայականից և խախտում են ՄԱԿ Անվտանգության խորհրդի որոշ բանաձևեր:

Չնայած այս ամենին, Միացյալ Նահանգներում ավելի մեծ թափ են առնում խոսակցությունները միջուկային համաձայնագրի չեղարկման վերաբերյալ: ԱՄՆ-ում գտնվելու ժամանակահատվածում Ռոհանին հարցազրույց է տվել ԱՄՆ կենտրոնական հեռուստաալիքին: Վերջինս նշել է, որ ով էլ փոխարինի Բարաք Օբամային ԱՄՆ նախագահի պաշտոնում, չի կարող վերանայել միջուկային համաձայնագիրը: Իրանական թեման շարունակում է անմասն չմնալ ԱՄՆ նախագահի համար ընտրապայքարի քարոզչությունից: Եթե Դոնալդ Թրամփը մեղադրում է Օբամային Իրանի նկատմամբ մեղմ քա-

ղաքականության մեջ, ապա Հիլարի Քլինթոնը ոչ միայն սատարում է Իրանի հետ հարաբերությունների վերականգնման գաղափարը, այլ նաև հավանության է արժանացնում միջուկային համաձայնագիրը: Ավելին, նախագահների թեկնածուների առաջին հեռուստաբանավեճի ժամանակ դեմոկրատ թեկնածուն հպարտացել է, որ այդ համաձայնագրի կայացման գործում կա նաև իր ներդրումը, ինչպես նաև զգուշացրել է Թրամփին, որ Իրանի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը կարող է հանգեցնել նոր պատերազմի տարածաշրջանում:

Սեպտեմբերի կեսերին ԱՄՆ ավիացիան հարվածներ հասցրեց Սիրիայի կառավարական ուժերին, իսկ հետո Պետդեպը հայտարարեց, որ դրանք սխալմամբ են եղել: Պաշտոնական Թեհրանն այս առնչությամբ հայտարարեց, որ ԱՄՆ-ը դիտավորյալ է այդ հարվածները հասցրել, իսկ երկրի հոգևոր առաջնորդը նշել է, որ ԱՄՆ-ը մոտ է Մերձավոր Արևելքում վերջնական ձախողմանը:

Իրան-տարածաշրջան. Շարունակվում է Իրան-Սաուդյան Արաբիա հեռակա հակամարտությունը, որն ընդգրկում է երեք հիմնական հարց՝ Մերձավոր Արևելքում և մահմեդական աշխարհում տարվող քաղաքականություն, նավթի արդյունահանման ծավալների վերահսկում և գների կայունացում, Սաուդյան Արաբիայում ուխտագնացության կազմակերպման հարցեր: Ինչ վերաբերում է առաջին խնդրին, Իրանը շարունակում է մեղադրել Սաուդյան Արաբիային Իրաքում, Սիրիայում և Բահրեյնում իրավիճակի ապակայունացման մեջ՝ կոչ անելով Արաբական երկրների լիգային զբաղվել նրանով: Նավթի միջազգային գների կայունացման նպատակով Սաուդյան Արաբիան պահանջում է Իրանից նավթի արդյունահանման ամենօրյա ծավալները նվազեցնել մինչև 3,2 մլն բարելի, մինչդեռ Իրանն իր հերթին պահանջում է Սաուդյան Արաբիայից կատարել առաջին քայլն այդ ուղղությամբ՝ արդյունահանվող նավթի ծավալները նվազեցնելով մինչև 5 մլն բարելի, ներկայիս գրեթե 11 մլն-ի փոխարեն: Կողմերը դեռևս ընդհանուր հայտարարի չեն գալիս նաև Սաուդյան Արաբիայում իրանցիների ուխտագնացության կազմակերպման հարցում: 2015թ. գրանցված հրմշտոցի արդյունքում զոհվածների, այդ թվում՝ 464 իրանցու մահվան մեջ Թեհրանը մեղադրում է Էր Ռիադին, մինչդեռ վերջինս ոչ միայն չի ընդունում իր մեղքը, այլ նաև հրաժարվում է ուժեղացնել անվտանգության միջոցառումները:

Իրանին հաջողվում է զարգացնել քաղաքական համագործակցությունը տարածաշրջանի մեկ այլ պետության՝ Թուրքիայի հետ: Նյու Յորքում Ռոհանին հանդիպել է թուրք գործընկերոջ հետ: Էրդողանը կարծիք է հայտնել, որ տարածաշրջանի երկու տերությունները պետք է միասին կարգավորեն առկա հիմնական խնդիրները, վերականգնեն կայունությունը տարածաշրջանում, հատկապես Սիրիայում և Իրաքում: ՄԱԿ ԳԱ 71-րդ նստաշրջանից հետո Իրանի արտաքին գերատեսչության ղեկավար Զավադ Զարիֆը չպլանավորված այց է կատարել Անկարա: Այստեղ նա փակ դռների հետևում հանդիպում է ունեցել թուրք գործընկերոջ՝ Մևլյութ Չավուշօղլուի հետ: Զարիֆը հանդիպում է ունեցել նաև Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի հետ: Ինչպես հաղորդում են իրանական պաշտոնական աղբյուրները, հանդիպման գլխավոր արդյունքը եղել է այն, որ կողմերը պայմանավորվել են դադարեցնել ռազմական գործողությունները Սիրիայում, ինչպես նաև պայմանավորվածություններ են ձեռք բերել Սիրիային տրամադրելիք հումանիտար օգնության շուրջ:

Սեպտեմբերի 26-ին պաշտոնական այցով Թեհրան է ժամանել Սիրիայի խորհրդարանի ղեկավար Հադիյա Աբասը: Վերջինս հանդիպումներ է ունեցել Իրանի գործընկեր Ալի Լարիջանիի, նախագահ Ռոհանիի և Իրանի հոգևոր առաջնորդի միջազգային հարցերով խորհրդական Ալի Վելայեթիի հետ: Կողմերի քննարկման հիմնական թեման, բնականաբար, եղել են Սիրիայի իրավիճակն ու դրա կարգավորման ուղղությամբ կատարելիք քայլերը: Սիրիայի խորհրդարանի ղեկավարը մեղադրել է Թուրքիային, Սաուդյան Արաբիային և Կատարին ստեղծված իրավիճակի մեջ՝ հորդորելով հեռու մնալ Սիրիայից:

Իրան-Հայաստան. Սեպտեմբերի 19-ին պաշտոնական այցով Իրան է մեկնել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը: Իրանի արտաքին գերատեսչության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ համագործակցության հարցեր էներգետիկ, տրանսպորտային և տարանցման ոլորտներում: Քննարկվել է նաև դեպի Հայաստան իրանական գազի արտահանման ծավալների մեծացման հարցը: Կողմերը հայտնել են, որ ծրագրվում է ամենօրյա գազի մատակարարումները դեպի Հայաստան հասցնել մինչև 6 մլն մ^3-ի: Իրանում ՀՀ դեսպան Արտաշես Թումանյանը սեպտեմբերի 25-ին հանդիպել է Իրանի առևտրի, արդյունաբերության, հանքերի և գյուղատնտեսական պալատի նախագահ Հոսեյն Շաֆեիի հետ: Կողմերը քննարկել են բանկային, ապահովագրու-

թյան ոլորտներում համագործակցության զարգացման, մաքսային, հարկային և առևտրային ռեժիմներին առնչվող հարցեր: Շաֆեին կարևորել է Հայաստանի դերը Իրան-ԵԱՏՄ հարաբերությունների զարգացման գործում:

Իրանի արտաքին քաղաքականության օրակարգային այլ ուղղություններ. Որոշ ակտիվություն գրանցվեց Իրան-Ռուսաստան տնտեսական հարաբերություններում: Կողմերը քննարկել են Վոլգա գետով իրանական նավերի տարանցման հարցը, ինչը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև Եվրոպայի հետ Իրանի տնտեսական կապերի զարգացման գործում: Իրանն ու Ռուսաստանը ստորագրել են բանկային ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրեր: Կողմերը պայմանավորվել են նաև միմյանց միջև առևտրաշրջանառությունն իրականացնել ազգային արժույթներով: Հարկ է նշել նաև, որ երկու երկրները նման պայմանավորվածություն ձեռք էին բերել դեռևս 2013թ., սակայն այս ուղղությամբ առաջընթաց մինչ այժմ չի գրանցվել:

ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանին մասնակցելուց առաջ Իրանի նախագահ Հասան Ռոհանին պաշտոնական այցով մեկնել է Լատինական Ամերիկայի մի քանի երկրներ: Առաջին կանգառը Վենեսուելան էր, որտեղ սեպտեմբերի 17-18-ը կայացել է Չմիացման երկրների շարժման ղեկավարների տարեկան գագաթաժողովը: Ռոհանին հանդիպում է ունեցել Վենեսուելայի գործընկեր Նիկոլաս Մադուրոյի հետ: Նախագահները քննարկել են երկկողմ տնտեսական, հատկապես էներգետիկ ոլորտում համագործակցության վերաբերյալ հարցեր: Կողմերը պայմանավորվել են համատեղել ջանքերը Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունում և նավթի միջազգային գների կայունացման հարցում: Ռոհանիի հաջորդ կանգառը Կուբայում էր, որտեղ նախագահը հանդիպումներ է ունեցել Կուբայի նախագահ Ռաուլ Կաստրոյի և Ֆիդել Կաստրոյի հետ: Կողմերը քննարկել են երկկողմ (մասնավորապես առողջապահության ոլորտում) համագործակցության վերաբերյալ հարցեր:

Սակայն Իրանի նախագահի լատինամերիկյան շրջայցը դուր չի եկել Վաշինգտոնին: Ամերիկյան «Ֆորին Ըֆեյըրս» հեղինակավոր պարբերականը գրում է, որ Իրանը նպատակ ունի ամրապնդվելու ԱՄՆ թիկունքում և առաջարկում է Սպիտակ տանը կանխարգելել Իրանի և Լատինական Ամերիկայի երկրների միջև տնտեսական կապերի զարգացումը: Հիշեցնենք, որ ամիսներ

առաջ Լատինական Ամերիկայի մի քանի երկրներ շրջայց էր կատարել նաև Իրանի արտաքին գործերի նախարար Ջավադ Զարիֆը:

Դրական զարգացման որևէ եզր դեռևս չի գտնվում Իրան-Իսրայել հարաբերություններում: Միջուկային ծրագրերի կրճատումից և ռազմական ծրագրերի սառեցումից հետո Իրանն ինտենսիվորեն աշխատում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության ուսումնասիրման դաշտ բերել Իսրայելին: ԱԷՄԳ 60-րդ տարեկան գագաթաժողովի ժամանակ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհին իր ելույթում նշել է, որ կազմակերպությունը պետք է մոնիթորինգի ենթարկի Իսրայելի միջուկային ծրագրերը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. սեպտեմբեր

Անուշավան Բարսեղյան*

Ադրբեջան-Իրան. Բաքվում անցկացված *Iran Project-2016* ցուցահանդեսի շրջանակներում, գնահատելով Ադրբեջանում իրանական կապիտալի դերակատարումը, ԱՀ էկոնոմիկայի փոխնախարար Ս.Բաբաևը նշել է իրանական ընկերությունների կողմից ադրբեջանական տնտեսությունում մինչ օրս կատարած $2,6 մլրդ ներդրումների մասին, որից $145 մլն-ը՝ ոչ նավթային ոլորտում: Ըստ նրա, ներկայումս Ադրբեջանում գործում է իրանական կապիտալով մոտ 450 ընկերություն: Ներդրումների ներկայացված համամասնությունը վկայում է նավթային ոլորտում սերտ համագործակցության մասին: Ընդհանրապես, էներգետիկան և տրանսպորտի ոլորտը, հատկապես վերջին շրջանում, դարձել են երկու երկրների միջև փոխգործակցության հիմնական ուղղությունները:

Նշված համագործակցության զարգացման մասին է վկայում նաև Իրանի խորհրդարանի կողմից Ադրբեջանի հետ համատեղ երկու էլեկտրակայան կառուցելու մասին օրենքի հաստատումը: Սույն օրենքով նախատեսված հէկերը պետք է կառուցվեն սահմանային Արաքս գետի վրա, ադրբեջանական Օրդուբադ և իրանական Մարազադ քաղաքներում:

Էներգետիկ կապերի ընդլայնումը պայմանավորված է նաև համատեղ ծրագրերում Ադրբեջանի պետական նավթային ընկերության (*SOCAR*) մասնակցությամբ: *SOCAR*-ի նախագահ Ռ.Աբդուլաևը հայտարարել է իրենց գազապահեստարանների մի մասը (1-2 մլրդ մ^3) Իրանին տրամադրելու պատրաստակամության մասին: Հաշվի առնելով, որ Իրանը խնդիրներ ունի ձմռանը երկրի հյուսիսային շրջանների գազամատակարարումն ապահովելու առումով, պահեստարանների տրամադրումը հնարավորություն է տալիս իրանական գազն ամռանը պահեստավորել և օգտագործել ձմռանը: Սակայն,

---

* «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

հարկ է նշել, որ տրամադրվող ծավալները փոքր են խնդրին ամբողջությամբ լուծում տալու համար:

SOCAR-ը նաև բանակցություններ է վարում Իրանի հետ սեփական գազապահեստներն իրանական գազով համալրելու նպատակով: Նախկինում այդպիսի բանակցություններ ընթանում էին «Գազպրոմի» հետ, սակայն ռուսական կողմի պայմանները ձեռնտու չեն եղել Ադրբեջանի համար:

ԱՀ-ում ԻԻՀ արդեն նախկին դեսպան Մ.Պակայինը, ամփոփելով իր պաշտոնավարման ժամանակահատվածում երկկողմանի կապերի զարգացումը, նշել է 4 տարվա ընթացքում Իրանի և Ադրբեջանի միջև կնքված 50 փաստաթղթի մասին: Ըստ նրա, զարգացել են տնտեսական կապերը, աճել է ավիաչվերթների քանակը, և որ մոտակա ժամանակում կգործարկվի Նախիջևան-Մեշխեդ երկաթուղին: Մ.Պակայինին դեսպանի պաշտոնում փոխարինել է Ջավադ Ջհանգիրզադեն, որն Իրանի խորհրդարանի նախկին պատգամավոր է, և ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ազգությամբ «ադրբեջանցի»:

Թեհրանի և Բաքվի միջև պարբերաբար խնդիրներ են առաջանում Ադրբեջանի կողմից իրանական մշակութային ժառանգության յուրացման փորձերի պատճառով: Բաքուն որպես ադրբեջանցի է ներկայացնում իրանցի բանաստեղծ Նիզամի Գյանջավիին, Նադիր շահին, Ղաջարների դինաստիայի թագաժառանգ Աբաս Միրզայի՝ Նախիջևանի խանին, յուրացնում է իրանական մշակութային արժեքները, ինչպիսիք են թառ երաժշտական գործիքը, ճոկան (*polo*) մարզախաղը, Յալդայի գիշերվա (Շաբ-է Յալդա) տոնը, Կասպիական ձին, իրանական մանրանկարչության արվեստի նմուշները, 1812թ. Ասլանդուզի ճակատամարտի ժամանակ ի նշան գնահատանքի նվիրաբերած պատմական դրոշը և այլն: Եվ ահա նման նոր դրսևորումների դեմ է արտահայտվել ԻԻՀ մեջլիսի պատգամավոր Սալման Խոդադադին: Խոսելով Հիրքանի անտառները (անտառների 2 միլիոն հեկտարը գտնվում է Իրանում, իսկ 50 հեկտարը՝ Ադրբեջանի տարածքում) ՅՈՒՆԵՍԿՕ-ում որպես ադրբեջանական գրանցելու Բաքվի ձգտումների մասին՝ պատգամավորը նշել է, որ Ադրբեջանն Իրանի ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն է կատարում

Ադրբեջան-Թուրքիա. Ադրբեջանը և Թուրքիան մեծ նշանակություն են տալիս միջազգային ծրագրերին համատեղ մասնակցությանը, հատկապես տրանսպորտային և էներգակիրների տարանցիկ ուղիներին առնչվող նախա-

գծերի առումով, ինչի մասին է վկայում G20 գագաթաժողովի շրջանակներում Ռ.Էրդողանի հիշատակումը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու մասին՝ որպես «Մետաքսի ճանապարհի» անբաժան մաս: Նշված երկաթուղին կօգտագործվի նաև Պեկին-Լոնդոն տրանսպորտային միջանցքի ստեղծման դեպքում, ինչի մասին Աշգաբադում համաձայնագիր են ստորագրել Թուրքիայի տրանսպորտի նախարար Ա.Արսլանը, Թուրքմենստանի ավտոմոբիլային տրանսպորտի նախարար Մ.Այդոգդիևը և Ադրբեջանի տրանսպորտի փոխնախարար Ա.Ասկերովը:

Թուրքիայի էներգետիկայի նախարար Բ.Ալբայրաքի հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի Նավթային պետական ընկերության (*SOCAR*) նախագահ Ռ.Աբդուլաևը վերահաստատել է Թուրքիայում երկարաժամկետ ծրագրերում ներդրումների շարունակման մտադրությունը: Քննարկվել են Տրանսանատոլիական խողովակաշարի (*TANAP*) և *Star* նավթավերամշակման գործարանի շինարարության, ինչպես նաև *Petkim* նավթաքիմիական հոլդինգի գործունեության հետ կապված հարցեր:

Ադրբեջանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական նպատակների ուղղությամբ ձեռնարկվող քայլերի արդյունավետության բարձրացման նպատակով Ադրբեջանում Թուրքիայի արդեն նախկին դեսպան Ալփեր Ջոշգունն առաջարկել է ադրբեջանա-թուրքական միասնական դեսպանություններ բացել մի շարք երկրներում:

Հայտնի մի շարք ուղղություններից (Հայոց ցեղասպանության մերժողական քաղաքականություն, «Խոջալուի ցեղասպանության» մասին ադրբեջանանպաստ սին տեղեկությունների տարածում, ԼՂ հակամարտություն և այլն) բացի, վերջերս Ադրբեջանի և Թուրքիայի միջև ուրվագծվում է ևս մեկ ընդհանուր թիրախ: Խոսքը Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) հետագա շահագործման դեմ իրար հաջորդող ելույթների և միջոցառումների մասին է: Միայն սեպտեմբեր ամսին այս թեմայով հայտարարություններ են արել ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Ս.Սեիդովը (Աստանայում անցկացված «Խաղաղության կառուցում առանց միջուկային զենքի» միջազգային գիտաժողով), Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Բ.Ալբայրաքը (Վիեննայում տեղի ունեցած ԱԷՄԳ գլխավոր գիտաժողով) և ԱՀ կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությանն առընթեր Միջուկային հետազոտությունների

ազգային կենտրոնի նախագահ Ա.Ղարիբովը: Չնայած ՀԱԷԿ-ի վերաբերյալ ԱԷՄԳ փորձագետների գնահատականներին, ադրբեջանցի և թուրք պաշտոնյաները շարունակում են տարբեր ամբիոններից խոսել ատոմակայանի հետագա շահագործումից իբր բխող, չհիմնավորված սպառնալիքների մասին:

Ադրբեջան-Վրաստան. Վրաստանի էներգետիկայի նախարար Կ.Քալաձեն կրկին անդրադարձել է 2016թ. ամբողջ ընթացքում արդիական մնացած՝ Ադրբեջանի և այլ երկրների հետ տարվող գազային բանակցությունների թեմային: Ըստ նրա, վերջնական որոշումը կայացված է ադրբեջանական *SOCAR*-ի հետ աշխատելու օգտին: Դրանից մի քանի օր անց նույն դիրքորոշումն է արտահայտել նաև Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին:

SOCAR-ն իր հերթին շարունակում է ընդլայնվել Վրաստանում. գազաբաշխիչ կայան է կառուցվել Մառնեուլի շրջանի Գիրիխլի գյուղում, նավթամթերքների պահեստավորման և բաշխման համար երկու պահուստային պարկ է գործարկվել Վրաստանի Կուլևի բնակավայրի մոտ գտնվող սևծովյան նավթային տերմինալում, մինչև 2016թ. վերջ նախատեսվում է Վրաստանում *SOCAR* բաժանորդների թվի աճ 40 հազարով:

Ադրբեջան-Իսրայել. Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուի Բաքու նախատեսվող այցի[1] համապատկերին հաճախակիացել են Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմավարական հարաբերությունների մասին հրապարակումներն իսրայելական և ադրբեջանական մամուլում: Իսրայելում Բաքվի միջազգային բազմամշակութայնության կենտրոնի ներկայացուցչության տնօրեն, միջազգային հարաբերությունների հարցերով փորձագետ Արյե Գուտը, բացի Իսրայելի կողմից Ադրբեջանին ցուցաբերված քաղաքական և հոգեբանական աջակցությունից, նշել է նաև ապրիլյան պատերազմի ընթացքում հատկացված ռազմատեխնիկական օգնության մասին: Վերջինս նաև ընդգծել է Ադրբեջան-Իսրայել տնտեսական կապերի զարգացումը՝ նշելով, որ երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը կազմում է $3,5 մլրդ:

Ադրբեջանանպաստ հայտարարություններով է հանդես եկել նաև Իսրայելի Ակկո[2] քաղաքի քաղաքապետ Շիմոն Լանկրին: Վերջինս վերահաստատել է «Խոջալուի ցեղասպանության զոհերին» նվիրված միջոցառումների հետագա անցկացման մասին իր մտադրությունները:

[1] Այցի կոնկրետ ժամկետները դեռևս հայտնի չեն:
[2] Ակկո քաղաքում առկա է համեմատաբար մեծ ադրբեջանական համայնք:

ՀՀ Անկախության օրվա կապակցությամբ Երևանում անցկացված զորահանդեսի ընթացքում ցուցադրված ՀՀ ԶՈՒ նորագույն զինատեսակները հիմք են տվել իսրայելական որոշ քաղաքական գործիչների և փորձագետների խոսել Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցության խորացման անհրաժեշտության մասին:

Հատկապես ուշագրավ է ՌԴ-ում Իսրայելի նախկին դեսպան, «Եվրոպա-Ասիա» ինստիտուտի տնօրեն Ցվի Մագենի հայտարարությունն առ այն, որ Ադրբեջանն ի վիճակի է իր տարածքը հուսալիորեն պաշտպանել իսրայելական հակաօդային պաշտպանության համակարգերով: Ըստ նրա, իսրայելական ՀՕՊ համակարգերը նախատեսված են օդից եկող լայն սպեկտրի սպառնալիքները, այդ թվում «Իսկանդեր» համալիրի հրթիռները չեզոքացնելու համար: Ց.Մագենի կարծիքով, Ադրբեջանը կարող է գնել իսրայելական «Կախարդական փայտիկ» ՀՕՊ համակարգը, որն «ընդունակ է որսալ և ոչնչացնել բալիստիկ հրթիռներ մեծ տարածությունների և մեծ բարձրությունների վրա»:

Նախկինում անդրադարձել էինք Ադրբեջանի իշխանությունների և ԱՄՆ հրեական կազմակերպությունների միջև ձևավորվող համագործակցության միտումներին: Այս գործընթացի շարունակման շրջանակներում կարելի է դիտել Բաքվում Ի.Ալիևի հանդիպումը Հրեաների համաշխարհային կոնգրեսի նախագահ Ռոնալդ Լաուդերի գլխավորած պատվիրակության հետ: Պատվիրակության կազմում են եղել նշված կառույցի գլխավոր գործադիր տնօրեն Ռոբերտ Զինգերը, դիվանագիտության գծով նրա տեղակալ Մարամ Ստերնը, փոխնախագահ Գոդ Նիսանովը, Հրեաների եվրասիական կոնգրեսի նախագահ Յուլիուս Մայնլը, Հրեաների Ռուսաստանի կոնգրեսի նախագահ Յուրի Կանները, փոխնախագահ Գերման Զախարևը: Ի.Ալիևի հավաստմամբ, հրեական պատվիրակությունն Ադրբեջանում ունի լայն ծրագրեր և ունենալու է բազմաթիվ հանդիպումներ:

Իսրայելի հետ կապերի ամրապնդմանը զուգահեռ, Ադրբեջանը տարբեր մակարդակներով մշտական խորհրդակցություններ է անցկացնում Պաղեստինի հետ, ինչի մասին հայտարարել է ԱՀ ԱԳ նախարար Է.Մամեդյարովը: Ըստ նրա, Ադրբեջանն իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումը տեսնում է «երկու պետություն» սկզբունքով:

Ադրբեջան-ԱՄՆ. Ադրբեջանում կայացած սահմանադրական բարեփոխումների հանրաքվեից առաջ ԱՄՆ կոնգրեսի Մարդու իրավունքների հանձ-

նաժողովում անցկացվել են «Ադրբեջան. նշանակություն ունե՞ն արդյոք մարդու իրավունքները» թեմայով լսումներ, որոնք վարել է երկկուսակցական հանձնաժողովի համանախագահ Ջիմ Մակգովերնը[3]: Հանձնաժողովի տարածած հայտարարության մեջ նշվում է, որ «2014-ից ԱՀ կառավարությունն ուժգնացրել է ճնշումներն այլախոհների, լրագրողների, ընդդիմության ներկայացուցիչների, կրոնական գործիչների և քաղաքացիական հասարակության նկատմամբ: Փակվել է ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող «Ազատություն» ռադիոկայանը, երկրից արտաքսվել են մի քանի արտերկրյա կազմակերպություններ, առկա տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանում դեռևս կա 100 քաղբանտարկյալ»: Նշվում է նաև, որ Ի.Ալիևի իշխանությունն ընկղմվել է կոռուպցիայի մեջ, թուլանում է երկրի տնտեսությունը, իսկ մանաթը՝ արժեզրկվում:

Նիստի ընթացքում քննարկվել են ՀԿ-ների և ԶԼՄ գործունեությունը սահմանափակող ադրբեջանական օրենքները, քննադատության են ենթարկվել ինչպես նախկին, այնպես էլ նոր սահմանադրական փոփոխությունները, որոնք նպատակ ունեն անսահման և անժամկետ դարձնել Ի.Ալիևի իշխանությունը: Ուշադրություն է հրավիրվել նաև հանրաքվեի քարոզարշավի ընթացքում ընդդիմության նկատմամբ կիրառված բռնաճնշումների վրա:

Քննարկումներին մասնակցել են նաև Խադիջա Իսմայիլովան (*Skype*-ով), Ադրբեջանի Ազգային ճակատ կուսակցության (ԱԱՃԿ) նախագահի որդի Թուրքել Քերիմլին և ԱՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ռ.Կոզլարիչը:

Ինչպես այս, այնպես էլ *The Washington Post* պարբերականում ԱՄՆ բարձրաստիճան դիվանագետներ Դ.Կրամերի և Ռ.Կոզլարիչի՝ Ադրբեջանի իշխանությունների հասցեին քննադատություն պարունակող հոդվածներն Ադրբեջանում դիտվում են որպես դավադրության և ընդդիմադիր ԱԱՃԿ-ին սատարելու փորձ: Մերձիշխանական լրատվամիջոցները հայտարարում են ԱՄՆ-ի կողմից իբր իրականացվող Ադրբեջանի իշխանությունների վարկաբեկման քարոզարշավի մասին և դա բացատրում «տարածաշրջանում ռուսական ազդեցության աճ թույլ չտալու ԱՄՆ ձգտումներով»: Այդ հրապարակումների համաձայն՝ «Վաշինգտոնի թշնամական քաղաքականությունը նպատակ ունի ստիպել Ադրբեջանին հրաժարվել բազմավեկտոր քաղաքականությունից»:

[3] Ջ.Մակգովերնը վերջերս որպես համահեղինակ միացել է «Ժողովրդավարություն Ադրբեջանի համար» օրինագծին, որը ենթադրում է պատժամիջոցների կիրառում Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության նկատմամբ՝ մարդու իրավունքների ոտնահարումների համար:

Ուշագրավ են նաև մերձիշխանական *haqqin.az* պորտալի գլխավոր խմբագիր Է.Ֆաթուլաևի կատարած «հետաքննության» արդյունքները, որոնք, իբր, վկայում են ԱՄՆ ԿՀՎ-ի կողմից Ադրբեջանում խժդժություններ առաջացնելու նպատակով ձեռնարկված քայլերի մասին: Ըստ Է.Ֆաթուլաևի, քանի որ ազատական և ազգային-ժողովրդավարական ուժերը սպառված են և ի վիճակի չեն ապակայունացնել իրավիճակը երկրում, ԱՄՆ-ն արհեստականորեն ներդնում է Ադրբեջանի համար ոչ ավանդական իսլամական ուղղությունները՝ գյուլենիզմը և սալաֆիզմը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. սեպտեմբեր

Հայկ Գաբրիելյան[*]

Ռուսաստան. *Տնտեսական.* Սեպտեմբերի 2-ին կայացավ վերջին 9 ամսում Ռուսաստանից Թուրքիա չարտերային առաջին չվերթը. Անթալիա հասցվեց մոտ 300 զբոսաշրջիկ: Ռուսաստանի և Թուրքիայի միջև չարտերային ավիահաղորդակցությունը փակվել էր «Սու-24»-ի միջադեպից հետո: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը սեպտեմբերի վերջին հայտարարեց, որ չարտերային հաղորդակցության վերսկսման շնորհիվ մեկ ամսում Թուրքիա է այցելել 60.000 ռուսաստանցի զբոսաշրջիկ, և հույս հայտնեց, որ հետագայում նրանց հոսքը միայն կաճի:

Ռուս-թուրքական ներդրումային հիմնադրամը $1 մլրդ-ով առաջնահերթ ոլորտներում առաջին համատեղ նախագծերը կարող է ֆինանսավորել 2017թ.: Սեպտեմբերին ՌԴ էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակը հայտարարեց, որ «Թուրքական հոսք» գազատարի նախագծի «ճանապարհային քարտեզը» կարող է պատրաստ լինել հոկտեմբերին, իսկ միջկառավարական համաձայնագիրը՝ դրանից մի քանի ամիս հետո: Նրա խոսքով՝ «ճանապարհային քարտեզը» ներկայումս գտնվում է թուրք գործընկերների մոտ, և դրական պատասխանի դեպքում գազատարի առաջին ճյուղը կկառուցվի մինչև 2019թ. ավարտը:

«Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլերը հայտարարեց, որ Ռուսաստանն ու Թուրքիան դիտարկում են «Թուրքական հոսք» գազատարը թուրքհունական սահման հասցնելու հնարավորությունը: Միլերի խոսքերով՝ «Գազպրոմը» Թուրքիայի տարածքային ջրերում «Թուրքական հոսք» գազատարի ծովային հատվածի 2 ճյուղերի կառուցման հետազոտական աշխատանքների թույլտվություն է ստացել: Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Բերաթ Ալբայրաքն իր հերթին հույս հայտնեց, որ

[*] Թուրքագետ:

գազատարի շուրջ կարևոր որոշումներ կընդունվեն Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հոկտեմբերյան այցի ժամանակ:

Ռուսաստանը և Թուրքիան մոտեցել են ազատ առևտրի գոտու (ԱԱԳ) մասին համաձայնագրի կնքմանը, նրանք մշակում են տնտեսական համագործակցության վերականգնման «ճանապարհային քարտեզ»՝ նախատեսված 3 տարվա (2016-2019թթ.) համար, ինչը հնարավորություն կտա 1-1.5 տարում վերադառնալ նախկին ցուցանիշներին:

Քաղաքական. Սեպտեմբերի 4-5-ին Չինաստանի Հանչժոու քաղաքում G20-ի գագաթաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների երկկողմ հանդիպումը, որի ժամանակ Պուտինն ու Էրդողանը քննարկեցին երկու երկրների միջև փոխգործակցության, ահաբեկչության դեմ պայքարի հարցերը, տարածաշրջանային և միջազգային զարգացումները (Չինաստանում տարբեր երկրների առաջնորդների հետ հանդիպումներն Էրդողանի առաջին միջազգային բանակցություններն էին Թուրքիայի ռազմական հեղաշրջման փորձից (ՌՀՓ) հետո): Սեպտեմբերի վերջին Պուտինն ու Էրդողանը քննարկեցին երկկողմ համագործակցությունն ու սիրիական հարցի կարգավորումը: Բացի այդ, Էրդողանը շնորհավորեց Պուտինին Պետդումայի ընտրությունների հաջող անցկացման համար:

Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը հեռախոսազրույց ունեցավ Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդևի հետ, շնորհավորեց նրան Պետդումայի ընտրություններում «Եդինայա Ռոսիա» կուսակցության հաղթանակի կապակցությամբ, շնորհակալություն հայտնեց ՌՀՓ-ի ժամանակ Թուրքիային Ռուսաստանի հայտնած համերաշխության համար: Չնայած դրան՝ Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Անկարան չի ճանաչում Ղրիմում ՌԴ Պետդումայի ընտրությունների արդյունքները և շարունակում է աջակցել Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարեց, որ Ռուսաստանը ՌՀՓ-ի ժամանակ պաշտպանել է ոչ թե Էրդողանի դիրքորոշումը, այլ միջազգային իրավունքը:

Պուտինը հայտարարեց, որ Սիրիայի հյուսիսում Թուրքիայի զինված ուժերի (ԹԶՈՒ) իրականացրած ռազմական գործողությունն անսպասելի չէր իրենց համար՝ նշելով, որ Ռուսաստանը Սիրիայի հարցով բանակցում է ԱՄՆ-ի և Թուրքիայի հետ, և որ իրենք կարող են պայմանավորվել Սիրիայում իրավիճակը բարելավելու շուրջ: Թուրքիայի նախագահի մամլո քարտուղար Իբրա-

հիմ Քալընը հայտարարեց, որ Ռուսաստանը սկզբունքորեն չի առարկում «Եփրատի վահան» գործողությանը, և որ երկու երկրները համագործակցում են Հալեպում տիրող իրավիճակի շուրջ:

Եվ այնուամենայնիվ, ՌԴ ԱԳՆ-ն Թուրքիային կոչ արեց հրաժարվել այնպիսի քայլերից, որոնք կարող են բարդացնել Սիրիայում տիրող իրավիճակը, լուրջ մտահոգություն հայտնեց Սիրիայի տարածքի խորքերը ԹՁՈ առաջխաղացման կապակցությամբ՝ ուշադրություն հրավիրելով այն բանի վրա, որ դա իրականացվում է առանց սիրիական լեգիտիմ իշխանությունների հետ համաձայնության և առանց ՄԱԿ ԱԽ հավանության: ՌԴ ԱԳՆ-ն ընդգծեց նաև, որ սիրիական ընդդիմության և «Ջաբհաթ ալ-Նուսրա» ահաբեկչական խմբավորման «սնուցումը» շարունակվում է թուրք-սիրիական սահմանով:

Անկարա ժամանեց Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովը, ինչն աննախադեպ էր վերջին 11 տարվա համար: Գերասիմովն իր թուրք գործընկեր Հուլուսի Աքարի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Սիրիայում ԹՁՈ գործողությունների ոչ լեգիտիմ լինելու մասին և իրազեկեց «Եփրատի վահան» գործողության ձգձգման կամ ընդլայնման դեպքում հնարավոր ռազմաքաղաքական ռիսկերի մասին: Հանդիպման արդյունքներով կողմերը պայմանավորվեցին երկու երկրների ռազմական գերատեսչությունների միջև կապուղիներ հաստատելու շուրջ: Վալերի Գերասիմովը հայտարարեց, որ Ռուսաստանի Սևծովյան նավատորմն ունակ է ոչնչացնել պոտենցիալ հակառակորդի ուժերը դեռ կենտրոնացման նավահանգիստներում՝ ընդգծելով, որ եթե նախկինում ասում էին, թե Թուրքիան Սև ծովի գրեթե լիակատար տերն է, ապա ներկայումս իրավիճակն այլ է: Թուրքական մամուլը Գերասիմովի այս հայտարարությունը որակեց որպես շոկային:

ԱՄՆ. Էրդողանը Չինաստանում G20 գագաթաժողովի շրջանակներում հանդիպեց ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ և քննարկեց նաև Գյուլենի արտահանձնման հարցը: Օբաման հայտարարեց, որ Վաշինգտոնը չի տեսնում ՌՀՓ-ից հետո անվտանգության ոլորտում Անկարայի հետ հարաբերությունների վատթարացում և մտադիր է օգնել Թուրքիայի իշխանություններին ՌՀՓ կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու հարցում: Էրդողանը կարևորեց այն, որ ԱՄՆ-ը և Թուրքիան ընդհանուր մոտեցում մշակեն ահաբեկչական կազմակերպությունների շուրջ: Սեպտեմբերին ՄԱԿ ԳԱ 71-րդ նստաշրջանին մասնակցելու համար ԱՄՆ մեկնեց Էրդողանը, որը Նյու

Յորքում հանդիպեց ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի հետ: Վերջինը հաստատեց, որ ԱՄՆ-ը պատրաստ է մշտական հիմունքով Թուրքիային օգնել ՌՀՓ հետաքննման հարցում և Անկարա ուղարկել իր իրավաբաններին:

Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը հայտարարեց, որ իրենք չեն կարծում, թե ԱՄՆ-ը կապված է ՌՀՓ-ի հետ. «Պատասխանատուն Ֆեթհուլա Գյուլենն է, և մենք ակնկալում ենք, որ Վաշինգտոնը կարտահանձնի կամ էլ կկալանավորի նրան»: Չավուշօղլուն նույնպես հայտարարեց, որ Թուրքիան ուղարկել է «բոլոր ապացույցները», որոնք հաստատում են ՌՀՓ-ին Գյուլենի մասնակցությունը: Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ եթե ԱՄՆ-ը հրաժարվի Թուրքիային արտահանձնել Գյուլենին, ապա դա կունենա երկարաժամկետ ծանր հետևանքներ: Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղի խոսքերով՝ կան հետախուզական տվյալներ, որ Գյուլենը ծրագրել է տեղափոխվել մեկ այլ երկիր, ինչի համար էլ ԱՄՆ-ը պետք է շուտափույթ կալանավորի նրան:

Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան չի վստահում ԱՄՆ հայտարարություններին, թե Սիրիայի քրդերի ինքնապաշտպանական ուժերը (*YPG*) ենթարկվել են Անկարայի պահանջին ու անցել են Եփրատի արևելյան ափը: Նա դժգոհեց, որ *YPG*-ին ԱՄՆ մատակարարած զենքի կեսն անցել է ԻՊ ձեռքը՝ հավելելով, որ իրենք դեպքերի նման զարգացման հնարավորության մասին նախապես զգուշացրել էին Օբամային: ԱՄՆ պետդեպարտամենտն իր քաղաքացիներին զգուշացրեց Թուրքիա այցելությունների վտանգավորության մասին:

Եվրամիություն. Թուրքիայի՝ Եվրամիության հարցերով նախարար Օմեր Չելիքը հայտարարեց, որ եթե չգործի ԵՄ-ի և Թուրքիայի միջև միգրացիոն համաձայնագիրը, ապա Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը պետք է եվրոպացիներին պարզաբանում տա փախստականների նոր ալիքի կապակցությամբ, որը կլինի 2-3 անգամ ավելի ուժեղ: Խոսելով ԵՄ-ի կողմից վիզային ռեժիմի վերացման խնդրի մասին՝ Չելիքը հայտարարեց, որ Թուրքիան դժգոհ է ՌՀՓ-ի հանդեպ ԵՄ արձագանքից և չի կարող փոխել իր հակաահաբեկչական օրենսդրությունը, քանի որ պայքարում է 5-6 ահաբեկչական կազմակերպության դեմ: Յունկերը հայտարարեց, որ Թուրքիայի համար վիզային ռեժիմի վերացումն անհնար է առանց նրա հակաահաբեկչական օրենսդրության բարեփոխման: Եվրոպական հանձնաժողովն

իր հերթին հայտարարեց, որ Թուրքիան ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի վերացման համար դեռևս չի կատարել 7 պահանջ:

Օմեր Չելիքը ԵՄ-ին մեղադրեց Թուրքիայի անդամակցության հարցում «երկակի ստանդարտներ կիրառելու» համար. «Թուրքիան ԵՄ-ից ակնկալում է մոտ ժամանակներս 23-րդ և 24-րդ բանակցային գլուխների բացում, որոնք առնչվում են խոսքի ազատությանն ու մարդու հիմնարար իրավունքներին: Այդ գլուխների բացումը կդառնա անկեղծության թեստ»: Էրդողանը Նյու Յորքում հայտարարեց, որ Թուրքիան «բավարարում» է ԵՄ-ին անդամակցելու չափանիշներին և ցանկանում է, որ ԵՄ-ն անկեղծ լինի իր հանդեպ: Չավուշօղլուն իր հերթին հայտարարեց, որ Թուրքիայի քաղաքացիները մտահոգված են ՌՀՓ-ից հետո ԵՄ «երկակի ստանդարտներից» և «ճնշում» են գործադրում կառավարության վրա՝ պահանջելով դադարեցնել ԵՄ-ին անդամակցելու բանակցությունները, քանի որ հիասթափված են նրանից, որ ՌՀՓ-ից հետո եվրոպական առաջնորդներից ոչ ոք չայցելեց Թուրքիա և աջակցություն չհայտնեց:

Թուրքիա այցելեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Բորիս Ջոնսոնը, որը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան ԵՄ-ից դուրս գալուց հետո ազատ առևտրի մասին նոր համաձայնագիր է կնքելու Թուրքիայի հետ՝ ընդգծելով, որ Մեծ Բրիտանիան լքում է ԵՄ-ը, բայց ոչ Եվրոպան:

Թուրքիան ծրագրում է նոր դեսպան ուղարկել Բեռլին: Թուրքիայի դեսպանն այստեղից հետ էր կանչվել հունիսին, երբ Բունդեսթագը ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև: Չավուշօղլուն հայտարարեց, որ Բունդեսթագի պատգամավորները կարող են «Ինջիրլիք» այցելել հոկտեմբերի սկզբին. «Գերմանիան հանդես է եկել շատ կարևոր հայտարարությամբ, որը պետք է օրինակ և դաս դառնա բոլորի համար: Գերմանիան կատարել է Թուրքիայի պահանջը՝ հայտարարելով, որ Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին որոշումն իրավական առումով պարտավորեցնող չէ, չունի իրավական որևէ ուժ»: Սեպտեմբերին հայտնի դարձավ, որ Գերմանիան մտադիր է 58 մլն եվրո ներդնել «Ինջիրլիքի» ավիաբազայի զարգացման համար:

Իրան. Իրանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Սիրիայում ահաբեկիչների դեմ Թուրքիայի գործողությունները հասկանալի են, սակայն Թուրքիան չպետք է սպառնա Սիրիայի ինքնիշխանությանը, չպետք է միջամտի նրա ներքին գործերին՝ առանց այդ երկրի կենտրոնական կառավարության թույլտվության:

Նյու Յորքում տեղի ունեցավ Իրանի և Թուրքիայի նախագահներ Հասան Ռուհանիի և Ռեջեփ Էրդողանի հանդիպումը, որի ժամանակ կողմերն ընդգծեցին, որ Թեհրանն ու Անկարան կարող են առաջատար դեր խաղալ տարածաշրջանում և հատկապես Սիրիայում ու Իրաքում ահաբեկչության դեմ պայքարում: Նյու Յորքից Իրան վերադարձի ժամանակ ոչ պաշտոնական այցով Թուրքիա ժամանեց Իրանի արտգործնախարար Մոհամադ Ջավադ Զարիֆը, որը հանդիպեց Չավուշօղլուի հետ: Հանդիպման ժամանակ Զարիֆն ու Չավուշօղլուն քննարկեցին երկկողմ հարաբերություններն ու տարածաշրջանային վերջին զարգացումները: Զարիֆին ընդունեց նաև Բինալի Յըլդըրըմը:

Իրանի ճանապարհների և քաղաքային զարգացման նախարար Աբաս Ախունդին հայտարարեց, որ իրենք փորձում են երկրի հյուսիսում գտնվող Ռեշտ քաղաքը երկաթուղային ճանապարհով կապել Թուրքիայի հետ: Նրա խոսքով՝ Իրանը նաև ձգտում է ընդլայնել երկաթուղային ցանցը Կասրե Շիրինից դեպի Իրաք, ապա Սիրիա և Միջերկրական ծով: Դրանից առաջ Տրապիզոնի առևտրի և արդյունաբերական պալատի ղեկավար Սուաթ Հաջըսալիհօղլուն կոչ էր արել անհապաղ կառուցել Տրապիզոն-Իրան երկաթգիծը: Նրա խոսքերով՝ Իրանը Տրապիզոնի միջոցով կարող է դուրս գալ դեպի աշխարհ, այդ թվում նաև դեպի Ռուսաստան: Հաջըսալիհօղլուն նկատել էր, որ Իրանից Ռուսաստան արտահանումը կարող է իրականացվել Տրապիզոնով, ինչը կաշխուժացնի առևտուրը Թուրքիայի արևելքում և կնպաստի Տրապիզոնի նավահանգստի զարգացմանը:

Իսրայել. Սեպտեմբերի վերջին Բերաթ Ալբայրաքը հայտարարեց, որ Իսրայելը «Մավի Մարմարայի» միջադեպի համար $20 մլն է փոխանցել Թուրքիայի արդարադատության նախարարության հաշվեհամարին: Այդ ժամանակ հաղորդվեց, որ Թուրքիան և Իսրայելը 10 օրվա ընթացքում փոխադարձ դեսպաններ կնշանակեն:

Վրաստան, Ադրբեջան. Էրդողանը հեռախոսազրույց ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ՝ կապված Ղուրբան-բայրամի տոնի հետ և քննարկեց երկկողմ հարաբերությունների զարգացման հարցը: Սեպտեմբերին հայտնի դարձավ, որ Ադրբեջանում Թուրքիայի նոր դեսպան Էրքան Օզորալը Բաքու կժամանի հոկտեմբերին՝ փոխարինելու համար գործող դեսպան Իսմայիլ Ալփեր Ջոշքունին, որն առաջարկեց մի շարք երկրներում ստեղծել թուրք-ադրբեջանական համատեղ դեսպանատներ:

Թուրքիան, Թուրքմենստանն ու Ադրբեջանը ստորագրեցին Աշգաբադի համաձայնագիրը, որը նախատեսում է Պեկինի և Լոնդոնի միջև տրանսպորտային միջանցքի ստեղծում: Թուրքիայի տրանսպորտի նախարար Ահմեթ Արսլանի խոսքով՝ կան բոլոր հնարավորությունները՝ ստեղծելու Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքները: Էրդողանը Չինաստանում հայտարարեց, որ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղին նոր Մետաքսե ճանապարհի անքակտելի մասն է, որն իրագործման դեպքում Արևմուտքը կկապի Արևելքի հետ:

Ադրբեջանի պետական նավթային ընկերության՝ *SOCAR*-ի նախագահ Ռովնագ Աբդուլաևը Բերաթ Ալբայրաքի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ *SOCAR*-ը շարունակելու է ներդրումներ անել Թուրքիայի երկարաժամկետ նախագծերում: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին Անդրանատոլիական գազատարի (*TANAP*), *Star* նավթավերամշակման գործարանի կառուցման հարցերը, *Petkim* նավթաքիմիական հոլդինգի գործունեության հետ կապված հարցերը: Աբդուլաևի խոսքով՝ *Star* նավթավերամշակման գործարանի կառուցումն ավարտվել է 73%-ով, իսկ *TANAP*-ի կառուցումն ընթանում է ողջ թափով:

Ադրբեջան այցելեց Թուրքիայի պաշտպանության նախարար Ֆիքրի Ըշըքը՝ մասնակցելու սեպտեմբերի 27-30-ին Բաքվում անցկացվող *ADEX-2016* պաշտպանական արդյունաբերության երկրորդ ցուցահանդեսին: Այդ ժամանակ հաղորդվեց, որ Թուրքիան ավարտին է հասցրել Ադրբեջանին *ROKETSAN* ընկերության արտադրության *T-300 Kasirga* համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի մատակարարումները: Բացի այդ՝ Ադրբեջանի զինված ուժերի համար անցկացվել են հատուկ դասընթացներ՝ սպասարկելու համար հրթիռային այդ համակարգերը: Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար Սալիհ Զաքի Չոլաքը հանդիպեց Վրաստանի պաշտպանության նախարար Լևան Իզորիայի հետ և քննարկեց պաշտպանական ոլորտում երկկողմ հարաբերությունների խորացման հնարավորությունը, ինչպես նաև ռազմական ուսուցման ոլորտում ակտիվ համագործակցության հարցը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2016Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Անուշավան Բարսեղյան[*]

Ադրբեջանի արտաքին քաղաքականությունում էական դերակատարում է ստանում արտերկրյա գործընկերների հետ ռազմական համագործակցությունը, որը, սեփական ռազմարդյունաբերության զարգացմանն ուղղված քայլերին զուգահեռ, նպատակ ունի բարձրացնել ԱՀ ԶՈՒ պատրաստվածության մակարդակը և ապահովել տեխնիկական հագեցվածությունը: Ռազմական համագործակցությունը նպաստում է գործընկեր երկրների հետ քաղաքական հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև ծառայեցվում է ներքին և արտաքին քարոզչական նպատակներին: Նման կապերի բովանդակությունը և նշանակությունը երբեմն ուռճացնելով՝ Ադրբեջանը ցանկանում է բարձրացնել սեփական ժողովրդի մարտական ոգին, մյուս կողմից՝ հոգեբանական ազդեցություն ունենալ ՀՀ-ի վրա:

Ս.թ. սեպտեմբերի 27-30-ը Բաքվում անցկացված *ADEX-2016* միջազգային պաշտպանական ցուցահանդեսն ամբողջությամբ ներառում էր վերը թվարկված նպատակները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառումը հաջորդում էր ՀՀ Անկախության օրվա կապակցությամբ Երևանում անցկացված զորահանդեսին, Ադրբեջանի ղեկավարությունը փորձում էր ամեն կերպ բարձրացնել «սեփական» արտադրության զինատեսակների նշանակությունը և նսեմացնել ՀՀ ԶՈՒ-ի կողմից ցուցադրված սպառազինությունը:

Այս ամենը նկատի ունենալով հանդերձ, պետք է փաստել, որ *ADEX-2016* միջազգային պաշտպանական ցուցահանդեսին հաջողվել էր ապահովել բավական մեծ ներկայացվածություն. մասնակցել են 34 երկրի 216 ընկերություն և 25 պաշտոնական պատվիրակություն: Ամենաշատ ընկերություններ

[*] «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

ներկայացրել են Թուրքիան (42), Իսրայելը (14) և Ռուսաստանը (14): Միջոցառման շրջանակներում կնքվել են մի քանի միջպետական համաձայնագրեր:

Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարությունը (ՊԱՆ) ներկայացրել էր 260 ցուցանմուշ, իսկ ՊԱՆ նախարար Յ.Ջամալովը հայտարարել է, որ ԱՀ-ը իրականացնում է պաշտպանական նշանակության 125 տեսակի արտադրանքի փորձարարական-կոնստրուկտորային մշակումներ: Ըստ նրա, Ադրբեջանը մտադիր է փոքր հեռահարության (280 կմ) բալիստիկ հրթիռների արտադրության տեխնոլոգիաներ գնել և այդ նպատակով բանակցում է աշխարհի առաջատար ընկերությունների հետ:

Այս հայտարարությունը որոշակի կասկածներ է առաջացրել փորձագետների շրջանում, քանզի բալիստիկ հրթիռների արտադրության հիմնումը ենթադրում է հսկայական ներդրումներ, որն անհավանական է ԱՀ ԶՈՒ ներկա բյուջեի պայմաններում: Բացի ֆինանսական կողմից, սույն ծրագրի իրականացումը ենթադրում է նաև ենթակառուցվածքների և կադրերի առկայություն:

Ցուցահանդեսին Ադրբեջանը հատկապես մեծ շուքով ներկայացրել է «սեփական» արտադրության ԱԹՍ-ները: ՀՀ ՊԱՆ *Şərq* արտադրական միավորման *AZAD Sistemlər* ձեռնարկությունում հավաքվող կամիկաձե տիպի *Zərbə* («Հարված») հարվածային ԱԹՍ-ի շնորհանդեսին ներկա է եղել նաև ԱՀ նախագահը: ԱՀ ՊՆ նախարար Զ.Հասանովի և ԱՀ ՊԱՆ նախարար Յ.Ջամալովի միջև կնքվել է պայմանագիր ԱՀ ԶՈՒ-ին այդպիսի հարյուրավոր ԱԹՍ-ների մատակարարման մասին:

Հարկ է նշել, որ 2009թ. պաշտոնական Բաքվի և իսրայելական *Aeronautics Defense Systems*-ի միջև կնքված պայմանագրով Ադրբեջանում 2011թ. գարնանը շահագործման է հանձնվել հետախուզական և հարվածային անօդաչու թռչող սարքերի գործարան, որի սեփականատեր է հանդիսանում ադրբեջանական *Azad Systems* ընկերությունը: Բացի դրանից, Իսրայելն Ադրբեջանին է փոխանցել նորագույն ԱԹՍ-ների լիցենզավորված արտադրության իրավունքը:

Ադրբեջանական տաղավարում ցուցադրվել են հետևյալ ԱԹՍ-ները.

Orbiter-2M. այն դժվար է հայտնաբերել իր փոքր չափերի և անաղմուկ էլեկտրական շարժիչի պատճառով: Օգտագործվում է հետախուզության և հրետանու կրակի ճշգրտման համար: Թռիչքի տևողությունը՝ 4 ժամ, հեռավորությունը 50 կմ, առավելագույն բարձրությունը՝ 5500 մ: Ադրբեջանական լրատվակայքերը, կիրառելով այս հանգամանքը որպես քարոզչական միջոց,

ներկայացնում են *Orbiter-2M* ԱԹՍ-ն որպես սեփական արտադրություն, մինչդեռ Ադրբեջանն իրականում ձեռք է բերել դրա արտադրման արտոնագիրն *Aeronautics Defense Systems* ընկերությունից:

Orbiter-3. հատուկ սարքավորում է, որն արդեն օգտագործվում է ԱՀ ԶՈՒ-ի կողմից: Նախատեսված է 2G, 3G և 4G բջջային ցանցերում խոսակցությունները և հաղորդագրությունները վերահսկելու համար: Հնարավորություն ունի օպերատորին հաղորդել ազդանշանի աղբյուրի կոորդինատները: Օգտագործվում է ներքին անվտանգության և հետախուզության նպատակներով: Թռիչքի տևողությունը՝ 5 ժամ, հեռավորությունը՝ 80 կմ, աշխատանքային բարձրությունը՝ 3 կմ, կարող է որսալ միաժամանակ 4 զանգ, ծածկում է 5 կմ^2 տարածք:

Orbiter-4. իսրայելական նորագույն ԱԹՍ է, որն օգտագործվում է համազորային հետախուզության և թիրախանշման համար, բացի օպտիկական և լազերային դիտարկման սարքավորումներից, հագեցած է նաև վերգետնյա թիրախներին հետևելու համար նախատեսված ռադարներով: Թռիչքի տևողությունը՝ 24 ժամ, հեռավորությունը՝ 150 կմ, առավելագույն բարձրությունը՝ 6 կմ:

Orbiter-1K. հարվածային ԱԹՍ է *MMCAV (Multi Mission Combat Armored Vehicle)* զրահապատ ավտոմեքենայի հիմքի վրա: Հեռահարությունը՝ 50 կմ, կարող է կրել 2.6 կգ պայթուցիկ նյութ: Սարքավորման ոչ այնքան մեծ արժեքն այն դարձնում է արդյունավետ միջոց հակառակորդի թեթև տեխնիկայի, կառավարման կետերի և կապի միջոցների դեմ օգտագործելու տեսանկյունից:

Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը փորձում է այս նմուշը ներկայացնել որպես սեփական արտադրություն, իսրայելական լրատվամիջոցների հաղորդումների համաձայն, *Aeronautics LTD*-ն դեռևս անհրաժեշտ աշխատանքներ է իրականացնում, որպեսզի ձեռնամուխ լինի Ադրբեջանի ՊԱՆ-ի հետ համատեղ *Orbiter 1K*-ի արտադրությանը:

Aerostar ԱԹՍ-ն օգտագործվում է խորքային հետախուզության և թիրախանշման համար: Թռիչքի տևողությունը՝ 12 ժամ, հեռավորությունը՝ 250 կմ, առավելագույն բարձրությունը՝ 6 կմ:

ԱՀ-ի կողմից առաջին անգամ ցուցադրվել են զրահապատ տրանսպորտային միջոցների վերանորոգման և սպասարկման մոբիլ կենտրոնի նախագիծը, նոր սերնդի տարբեր տրամաչափի ավիացիոն ռումբեր (ռազմական փորձագետների կարծիքով՝ ներկայացված 7 տեսակի ավիառումբերն անվանվում են իբր նորագույն, բայց իրականում դրանք ՌԴ-ում արտադրված սո-

վորական տիպի արկեր են), հրաձգային զենքերի ամբողջությամբ տեղական արտադրանքի նոր նմուշներ, տեխնիկայի այլ տեսակներ և սպառազինություն:

Ներկայացվել են նաև *QFAB-100SAB* բեկորա-ֆուգասային ավիառումբը, ադրբեջանա-կանադական *AZCAN* ընկերության արտադրության զրահապատ տրանսպորտային միջոցը, որը պետք է արտադրվի Ադրբեջանում և արտահանվի, տեղական արտադրության 14.5 մմ տրամաչափի *N-ST* ինքնաձիգը, արդիականացված *БРДМ-2*-ի հիմքի վրա հակատանկային հրթիռային համալիրը, որը զինված է թուրքական արտադրության *OMTAS* (հեռահարությունը՝ 4000 մ) և *UMTAS* (հեռահարությունը՝ 8000 մ) հրթիռներով: Այս համալիրը հնարավորություն ունի կրակ վարել թաքստոցից, թիրախի մասին տվյալները ճշգրտել և արդյունավետ կրակի վարման գնահատական տալ:

ՌԴ-ի կողմից միջազգային ցուցահանդեսին մասնակցել են *Вертолеты России, Уралвагонзавод, Сплав, Вымпел, Высокоточные комплексы* և *Техмаш* ընկերությունները:

Ռուսական *Рособоронэкспорт* ընկերության գլխավորությամբ ցուցահանդեսին ներկայացվել են *Тигр* հատուկ զրահապատ մեքենան, *Тор-М2КМ* զենիթահրթիռային համալիրը, *Т-90С* տանկը, *Метис-М1* ժամանակակից հակատանկային համակարգը, բարձր ճշգրտության *Краснополь-М2* հրանոթային համակարգը, բարձր ճշգրտության *Грань* ականանետային համակարգը, հրթիռներ *ЗРПК Панцирь-С1*-ի համար, *АГС-30* նռնականետը և այլն:

Ցուցահանդեսի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ռուսական *Вертолеты России* և ադրբեջանական *Silk Way Helicopter Services* ընկերությունները Ադրբեջանի տարածքում կհիմնեն համատեղ ընկերություն քաղաքացիական *Ми-8/17* ուղղաթիռների վերանորոգման համար: Ռուսական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Ի.Չեչիկովը նշել է, որ կողմերը ծրագրում են հետագայում ընդլայնել ստեղծվող կենտրոնի հնարավորությունները ռազմական ուղղաթիռների վերանորոգում իրականացնելու համար:

ADEX 2016 պաշտպանական միջազգային ցուցահանդեսը հնարավորություն է ընձեռել ամրապնդել ռազմական համագործակցությունն ավանդական գործընկերների հետ:

Թուրքիա. ԱՀ ՊՆ նախարար Զ.Հասանովը հանդիպել է *ADEX-2016* ցուցահանդեսի մասնակցության նպատակով Բաքու ժամանած Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարար Ֆիքրի Իշըքի գլխավորած պատվիրակության հետ: Քննարկվել են Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմական, ռազմատեխնիկական ոլորտներում և ռազմական կրթության բնագավառում համագործակցության էլ ավելի ընդլայնման, ինչպես նաև մասնագետների համատեղ պատրաստման, փորձի փոխանակման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Թուրքիայի հետ ռազմական համագործակցության զարգացման մասին է վկայում նաև թուրքական *Roketsan* ընկերության նախագահ Մ.Է. Ալպմանի հայտարարությունն այն մասին, որ իրենք ԱՀ ԶՈՒ-ին մատակարարում են կառավարվող հրթիռներ: Մինչ այժմ ԱՀ ԶՈՒ-ին մատակարարվել են 107 մմ և 102 մմ տրամաչափի հրթիռներ, *T-300 Kasirga* հրթիռային համակարգեր և դրանց ռազմամթերքը: Սակայն հիմա Ադրբեջանին մատակարարվում է 40 կմ հեռահարությամբ 122 մմ-անոց և 90-110 կմ հեռահարությամբ *T-300* կառավարվող հրթիռներ, այս տարի ավարտվել են *T-300 Kasirga*-ի մատակարարումներն Ադրբեջանին:

Իսրայել. ԱՀ ՊԱՆ նախարար Յ.Ջամալովի և ԱՀ-ում Իսրայելի դեսպան Դան Սթավի հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության հարցեր:

Ուշագրավ հայտարարությամբ է հանդես եկել Իսրայելի Յոկնեամ քաղաքի փոխքաղաքապետ Ռ.Պերեսը: Ըստ նրա, քաղաքում գործող իսրայելական պաշտպանական ոլորտի խոշորագույն մասնավոր ընկերություն հանդիսացող *Elbit Systems*-ը Ադրբեջանում կառուցում է պաշտպանական արդյունաբերության օբյեկտներ: Հարկ է նշել, որ նշված ընկերությունը զբաղվում է տարբեր տեսակի զինատեսակների, այդ թվում՝ ԱԹՍ-ների, ռադիոլոկացիոն, հրետանային և հրթիռային կրակի ուղղորդման տեխնիկայի համակարգերի մշակումներով և արդիականացմամբ: Ադրբեջանը գնում է նաև նշված ընկերության արտադրած *Soltam Spear Mk2* ավտոմատ նռնականետները:

Պակիստան. Սեպտեմբերի 25-ին Ի.Ալիևն ընդունել է Բաքու ժամանած Պակիստանի պաշտպանական արդյունաբերության դաշնային նախարար Ռ.Թ. Հուսեյնին: ԱՀ ՊԱՆ նախարար Յ.Ջամալովի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանական ոլորտում ադրբեջանա-պակիստանյան

համագործակցության ընդլայնման, առաջիկա խնդիրների, երկու երկրներում անցկացվող ցուցահանդեսներին մասնակցության ապահովման, փորձի փոխանակման, գիտական համագործակցության, փոխադարձ այցերի կազմակերպման հետ կապված հարցեր: Ռ.Թ. Հուսեյնը վերահաստատել է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սատարման Պակիստանի դիրքորոշումը և պատրաստակամություն հայտնել ԱՀ ԶՈՒ-ին մատակարարել պակիստանյան արտադրության արդիականացված սպառազինություն: Հարկ է նշել, որ ներկայումս Պակիստանի ռազմարդյունաբերական համալիրի նորագույն արտադրանք է համարվում Չինաստանի հետ համատեղ արտադրված *JF-17 Thunder* կործանիչը:

Ռուսաստան. ADEX-2016 ցուցահանդեսի շրջանակներում ԱՀ ՊԱՆ *Шарг* արտադրական միավորման և ՌԴ տակտիկական հրթիռային զինատեսակների կորպորացիայի միջև ստորագրվել է հուշագիր, որը նախատեսում է «օդ-օդ» և «օդ-երկիր» հրթիռների համատեղ արտադրություն:

Հանդիպում է կայացել նաև ԱՀ ՊՆ նախարար Զ.Հասանովի և ՌԴ օդատիեզերական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-գնդապետ Վ.Բոնդարևի ղեկավարած պատվիրակության միջև: Քննարկվել են ռազմական, ռազմատեխնիկական, ռազմական կրթության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցության հեռանկարները:

Тракторные заводы կոնցեռնի գլխավոր տնօրենի տեղակալ Ա.Լոսևի հայտարարության համաձայն, ռուսական արտադրության *БМП-3* հետևակի ռազմական մեքենաների մատակարարումն Ադրբեջանին ֆինանսական խնդիրների պատճառով հետաձգվում է մինչև 2017թ. վերջ կամ 2018թ. սկիզբ: Նախապես ծրագրվում էր այն ավարտել 2016թ.:

Բելառուս. ԱՀ նախագահն ընդունել է *ADEX-2016* պաշտպանական ցուցահանդեսին մասնակցելու նպատակով Բաքու ժամանած Բելառուսի ՊՆ նախարար Ա.Ռավկովին: Կողմերը գոհունակություն են հայտնել երկար տարիներ ընթացող երկկողմանի ռազմական հաջող համագործակցության կապակցությամբ: Ի.Ալիևն ընդգծել է, որ վերջին տարիներին Բելառուսից գնված զինտեխնիկան բավարարում է ամենաբարձր չափանիշներին:

ԱՀ ՊՆ նախարար Զ.Հասանովը և Բելառուսի ՊՆ նախարար Ա.Ռավկովը ստորագրել են 2017թ. ԱՀ և Բելառուսի ԶՈՒ-երի միջև համագործակցության պլանը:

Ավելի վաղ՝ սեպտեմբերի 22-ին, երկու երկրների միջև ռազմական համագործակցությունը խորացնելու հեռանկարներն են քննարկվել Զ.Հասանովը և Բելառուսի Անվտանգության խորհրդի պետքարտուղար Ս.Զուևը հանդիպման ընթացքում, իսկ ս.թ. հուլիսին Բաքու էր ժամանել Բելառուսի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, ՊՆ փոխնախարար Օ.Բելոկոնևը:

Աֆղանստան. ԱՀ նախագահ Ի.Ալիևը հաստատել է Ադրբեջանի և Աֆղանստանի միջև ս.թ. հուլիսի 15-ին ստորագրված ռազմական օգնության մասին պայմանագիրը:

ԱՄՆ. Այս համատեքստում ուշագրավ է, որ ԱՄՆ-ը մերժել է Աֆղանստանից դուրս բերված *Cougar* և *HMMWV* զինվորական տրանսպորտային միջոցները գնելու Ադրբեջանի առաջարկը, չնայած այն հանգամանքին, որ Աֆղանստանից դուրս բերվող ռազմական տեխնիկայի վաճառքում նախատեսվում էր առաջնահերթություն տալ խաղաղապահ գործողություններին մասնակցած երկրներին: Ամերիկյան որոշումը հիմնավորվել է հակամարտային գոտիներում գտնվող երկրներին զենք վաճառելու վրա պաշտոնական Վաշինգտոնի սահմանած արգելանքով: Ադրբեջանական լրատվամիջոցները փաստում են, որ չնայած նշված սահմանափակումներին, ԱՄՆ-ը վերջին տասը տարվա ընթացքում Վրաստանին անհատույց տրամադրել է 10-ից ավելի *Cougar* թեթև զրահապատ մեքենա և մոտ 100 *HMMWV* ամենագնաց:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

Նշումների համար

Նշումների համար

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 25.10.2016թ.
Թիվ 8 (77), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում